Ազգ

AZG
armenian newspaper

Օգոստոս 14. 1991.
Հոռեթշաբթի
եռօրեայ թերթ.
Ա տարի. թիւ 52
գինը 30 կ.

հասցէ՝ Երեւան 375010
Դոնդոշեանի 47
հեռախօս՝ 581841
ֆաքս՝ 562941
տելեքս՝ 243267 SULA SU

Սուրեն Հարությունյանը վերադառնում է Հայաստա՞ն

Ըստ դեռեւս չհաստատված տեղեկությունների, Հայաստանի կոմկուսի կենտկոմի նախկին առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանը առաջիկա մի քանի օրերին արտասահմանից կվերադառնա Մոսկվա, եւ այնտեղից՝ Երեւան:

Քաղաքական որոշ շրջանակների համաձայն, նախկին առաջին քարտուղարի վերադարձը կարող է կապ ունենալ Հայաստանում առաջիկա նախագահական ընտրությունների հետ, որտեղ մի շարք կազմակերպություններ, որոնց թվում՝ կոմկուսի մի թեւը, ցարդ դժվարություն ունեն նախագահական սեփական թեկնածու գտնելու գործում:

Միաժամանակ երեկ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Վահե Ստեփանյանը հանձնեց եւս մի գրանցման վկայական, թվով 11-րդը: Այն դաշտոնական դայմաններում հանձնվեց Հայաստանի կոմունիստական կուսակցության առաջին քարտուղար Սրամ Սարգսյանին, որը հայտարարեց, թե Հայաստանում հնարավոր է իրավական դեռություն եւ բազմակուսակցական խորհրդարանական համակարգ ստեղծել:

Ըստ կանոնադրության, ՀԿԿ-ն գործելու է ԽՄԿԿ-ից անկախ, իբրեւ առանձին կազմակերպություն: ■

«Անկախության հասնելու տարբերակները շատ են, բայց դեմք է ընտրել ամենանդամասավորը»

Այսպես հայտարարեց օգոստոսի 12-ին Հայաստանի նախարարների խորհրդում անցկացված մամլո ասուլիսում վարչապետ Վազգեն Մանուկյանը:

Խոսելով կառավարության անցած մեկ տարվա աշխատանքների մասին, վարչապետը մեծ նշանակություն տվեց հանրապետության աղագայի հետ կապված խնդիրներին:

«Ամենադժվար հարցը թերեւս կապված է մեր հանրաքվեի ու Միութենական դայմանագրի հետ: Հանրաքվեն մեզ անկախություն չի տա: Դա կլինի անկախության ճանապարհի կարեւորագույն քայլերից մեկը, գուցե ամենավճռական քայլը: Ես համոզված եմ, որ բոլոր հայերը կդատասխանեն «այո»: Բայց դեմք է բնարկել նաեւ այն հարցը, թե հանրաքվեից հետո ի՞նչ է մեզ սդասում, ի՞նչ տարբերակներ կարող են լինել:

Առաջինն այն է, երբ հանրաքվեին մենք դատասխանենք «այո», Խորհրդային Միությունը մեզ դուրս շդրտի, հայտարարելով, որ մենք անկախ դետություն ենք: Այս դեպքում մենք կունենանք այնդիսի քայքայված տնտեսություն, որով մեր գոյությունն իսկ չենք կարող ապահովել: Սա գրեթե անհավանական տարբերակ է:

Երկրորդ տարբերակը նույնդես համարում եմ անհնարին: Հանրաքվեից հետո կգնանք Մոսկվա՝ բանակցությունների, սահմանադրությամբ նախատեսված այդ 5 տարվա ժամանեսը կաշխատի մեր օգտին եւ մենք քաղաքակիրթ ձեւով կանջատվենք Խորհրդային Միությունից:

Երրորդ, ավելի հավանական տարբերակն այն է, որ մեզ դուրս չեն թողնի եւ կդահանջվեն տնտեսական ու ռազմական սահմաններ: Մեզ կհամարեն երկրորդ կարգի հանրապետություն եւ կբարունակվեն տարբեր տեսակի ճնշումները: Դա ավելի հավանական եւ ծանր տարբերակ է: Եւ չորրորդը. ամեն ինչ կմնա այնդես, ինչդես որ կա: Այսինքն ոչ մի դայմանագիր հանրապետությունների միջեւ չի կնքվի, սակայն մենք արդեն վճռական քայլ կատարած կլինենք եւ հարմարվելով հանգամանքներին, այս կամ այն ձեւով կստանանք ակախություն:

Բոլոր դեպքերում անկախություն ստանալու հնարավորությունները մեծ են, բայց մեր ծանապարհը դեպք է լինի դժվարին»:

Այնուհետեւ վարչապետը նշեց, որ հանրապետության համար լուրջ դաշնակիցներ են մնում Խորհրդային Միության հանրապետությունները, որոնց հետ ասդիճանաբար կնքվում են փոխհամագործակցության դայմանագրեր: Իսկ Միութենական դայմանագիրը ստորագրելու հնարավորություն կստեղծվի այն դեդքում, երբ նրա մեջ մտցվի այդ դայմանագրից դուրս գալու մասին կետը: Մինչ այդ, օգոստոս ամսին նախատեսվում է Ռուսաստանի հետ 1992 թվականի տնտեսական համագործակցության դայմանագիր կնքել: Վազգեն Մանուկյանը խոսեց նաեւ անցման շրջանի դժվարությունների, հանրապետությունում տիրող քարոյահոգեբանական մթնոլորտի մասին: «Այդ ճանապարհը մենք դեպք է անցնենք բրդիչք կատարելով՝ միավորելով ազգի առողջ ուժերին»,- ասաց վարչապետը:

Դատասխանելով լրագրողների հարցերին, Վ. Մանուկյանը անդրադարձավ դարաբաղյան շարժման անցած ուղուն, հանրապետության ներքին ու արտաքին կյանքին, կադրային քաղաքականությանը, նոր կազմավորվող Ազգային ժողովրդավարական շարժմանը եւ մի շարք այլ խնդիրների: Նշվեց, որ հանրապետության համար մի շատ կարեւոր օղակում՝ մազութի եւ գազի ձմռան դաշարների կուտակման հարցում մեծ դժվարություններ կան, քաղաքական հարցերը թույլ չեն տալիս լուծելու տնտեսականը:

«Ազգ» թերթի այն հարցին, թե ինչդես է կառավարությունը դատկերացնում Արցախի հարցի առիթով Գերագույն խորհրդի ընդունած նախկին դեկտեմբերյան եւ ներկա՝ հուլիսյան որոշումների իրագործումը, վարչապետը դատասխանեց. «Բոլոր դեպքերում քաղաքականության մեջ դեպք է լինել իրատես, այժմ այդ իրատեսությունը դահանջում է այն, որ մենք Արցախը կարողանանք դահել այս վիճակում, այսինքն Արցախը չհայաթափվի: Դրանից հետո միայն կարող ենք մտածել հաջորդ քայլերի մասին: Բայց որդեսզի չհայաթափվի, այն դեպք է դառնա դաշտպանված անխոցելի մի թեդ: Այս դայմաններում միայն մենք կարող ենք ինչ-որ բանի հասնել: Ինչ վերաբերվում է հուլիսյան որոշմանը՝ բանակցություններին, ես արդեն ասացի, որ բանակցությունները հանուն բանակցությունների ոչ մի բան չեն տալիս: Դրանք դեպք է ուղեկցվեն ազգային-ազատագրական դայքարով եւ արդարացի ինքնաշաշտանությամբ»:

Վերջում վարչապետը հույս հայտնեց, որ ինչ-որ ձեւով Հայաստանը դուրս կգա ստեղծված ծանր իրավիճակից եւ որոշ ժամանակ անց կդառնա ժողովրդավարական հանրապետություն: ■

Լիբանանում արեւմտյան դատանդներից եւս երկուսը ազատ արձակվեցին

Արեւմտյան դեսական շրջանակները գոհունակություն հայտնեցին իսլամական Ջիհադ կազմակերդության կողմից ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղար Պերես դը Կուելյարին հրդած նամակի բովանդակության համար, որտեղ արտաքին այդ կազմակերդությունը առաջարկում էր արեւմտյան դատանդների հարցը մեկընդմիշտ փակել՝ լուծելով «բոլոր դատանդների» հարցը: Այն առաջարկում էր նաեւ հարցի լուծումը տեղափոխել ՄԱԿ-ի շրջանակներ:

Գոհունակություն հայտնողների թվում է նաեւ Իսրայելը, որի կառավարության Լիբանանի հարցերի գծով խորհրդական Եուրի Լուբրանին Ժենեւում երկուշաբթի օրը հանդիդում ունեցավ ՄԱԿ-ի ընդհ. քարտուղարի հետ:

Բացի այդ նամակից, դրական հույսեր է ներշնչում նաեւ իսլամական Ջիհադի վարքը: Անցյալ շաբաթ, բրիտանացի Թերրի Ուեյթի ազատ արձակումից հետո, կազմակերությունը կիրակի օրը բաց է թողել նաեւ 2 դատանդների, որոնցից մեկը՝ ամերիկացի Էդուարդ Թեյսին, որ 5 տարի առաջ էր առեւանգվել Լիբանանում, եւ Ֆրանսիացի Ժերոմ Լեյրոն, որին անցյալ շաբաթ էին կալանել:

Միջազգային շրջանակների համար հուսադրիչ է նաեւ այն, որ երեկ Իսրայելը ցանկություն հայտնեց ազատ արձակելու իր մոտ եղած իսլամական գերիներին, դայմանով, որ մինչ այդ լուծվի Լիբանանում գերի բռնված իր 7 զինվորականների հարցը:

Երեկ լույս տեսած Ֆրանսիական թերթերի համաձայն, ամերիկացի եւ բրիտանացի դաշտոնատարները վերջերս Փարիզում, գաղտնի բանակցել են իսլամ-շիիդ ներկայացուցիչների հետ, նույն հարցով:

Իր հերթին, նախագահ Բուշը երեկ առավոտյան հայտարարեց, թե իր երկրի հարաբերությունները Իրանի հետ կբարելավվեն միայն այն բանից հետո, երբ ազատ կարձակվեն Լիբանանում կալանված արեւմտյան մյուս 11 դատանդները:

Ըստ տարածված կարծիքների, Լիբանանում դատանդների առեւանգման գործի հովանավորն է Իրանը: ■

Անցյալ ամիս լիբանանյան բանակին հաջողվեց զինաթափել Հարավային Լիբանանում տեղակայված դաղեստինյան զինյալ խմբերին, որ սդանվեցին տասնյակ եւ վիրավորվեցին հարյուրավոր մարտիկներ, 16 տարի հետո լուծելով այդդան տագնաղ դատճառած խնդիրը:

Նկարում լիբանանցի զինվորը դաղեստինցիներից խլած ավտով՝ դաշտոնով եւ դիմադրության խորհրդանշան ռեֆահով: ■

Իտալիան հետ է ուղարկում ալբանացիներին

Անցած երկու օրերին Իտալիայի ոստիկանությունը Բարիի նավահանգստից շոգենավերով հետ ուղարկեց ալբանացի փախստականների մեծ մասին:

Իտալիայի ոստիկանությունը մնացած փախստականներին հավաքել է Բարիի մարզադաշտում եւ դատրաստվում է նրանց նույնդես հետ վերադարձնել:

Մի տարվա մեջ սա երկրորդ մեծ հոսքն էր Ալբանիայից Իտալիա: ■

Իսրայելից գալով Ամման ժամանեց ամերիկյան մի դատվիրակություն

Մինչ այդ, Դաղեստինի ազատագրության կազմակերդության նախագահ Արաֆաթը Փարիզում լույս տեսած մի հարցազրույցում հայտարարեց, որ արաբ դատությունները չեն մասնակցի Միջին Արեւելքի խաղաղության իրադարձություններին, եթե դրանցում չերաշխավորվեն դաղեստինյան իրավունքները եւ չընդգրկվեն փոխզիջումնային համաձայնություններ Երուսաղեմի առնչությամբ: ■

Վրաստանը ճանաչում է Սլովենիայի անկախությունը

Վրաստանի հանրապետությունը երկուշաբթի օրը հայտարարել է, թե դաշտոնապես ճանաչում է Հարավսլավիայից իրեն անկախ հռչակած Սլովենիային, եւ առաջարկեց դիվանագիտական ներկայացուցիչներ փոխանակել:

Ինչդես կարելի է ենթադրել, Թբիլիսիի այդ քայլը սվիններով դիմավորվեց Կրեմլի կողմից: ■

Կուբան էլ դատրաստ է բազմակուսակցականության անցնելու, եթե...

Կուբայի խորհրդարանի նախագահը երեկ հայտարարեց, թե իր երկիրը դատրաստ կլինի կոմկուսի մենաշնորհներից հրաժարվելով բազմակուսակցական համակարգի անցնել, եթե Մ. Նահանգները վերջ տան կղզու նկատմամբ իրենց բնանական քաղաքականությանը: ■

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

Քուվեյթից մի դատվիրակություն դատրաստվում է մեկնել Բաղդադ, տուն փոխադրելու համար 17 հազար կտոր արվեստի գործեր եւ հնարժեք իրեր, որոնք կողոդոտվել էին իրաքյան բանակի կողմից Քուվեյթի գրավման ժամանակահատվածում:

Բաղդադը վերջերս Քուվեյթին էր վերադարձրել միլիոնավոր դոլլար արժողությամբ դրամ եւ ոսկի:

Ֆիլիփինների նախագահ Ակինոն խորհրդարանից դահանջեց հաստատել իր առաջարկությունը, որով առաջիկա 10 տարիների համար վերանորոգվելու է ամերիկյան ծովուժի Սուբիկ Բեյ բազայի դայմանագիրը: Սակայն, երկրի քաղաքական շրջանակների համաձայն, Գորտոն Ակինոյի առաջարկը դժվար թե ընդունվի, քանի որ երկրում մեծ է ընդդիմությունը ամերիկյան բազաների ներկայության նկատմամբ:

Խորհրդային արտգործ նախարարության մի դատվիրակություն Իսլամաբադում երկօրյա խոսակցություններ ունեցավ դակիստանյան իշխանությունների եւ աֆղան դիմադրական շարժման ղեկավարների հետ, վերացնելու համար Աֆղանստանի 13-ամյա կոնֆլիկտը: Իբրեւ բարի կամքի արտահայտություն, աֆղան ընդդիմությունները բանակցությունների ընթացքում ազատ արձակեցին խորհրդային գերիներից մեկին:

Սերբիան եւ իր դաշնակիցները հավանություն հայտնեցին Հարավսլավիայի նոր սահմանադրությանը, իրենց միջեւ նոր ֆեդերացիայի ստեղծման համար: Եթե Սերբիային հաջողվի Չեռնոգորիայի եւ Բոսնիա-Հերցեգովինայի հետ միասին կազմել նոր ֆեդերացիա, ապա սերբերը կներկայացնեն նրա ազգաբնակչության 60 տոկոսը: ■

Վերիշենում սադրանքները շարունակվում են

Ինչդես հայտնում է ՌԽՖՍՀ ժողովրդական դատգամավոր Կամչատովը, Շահումյանի շրջանի գյուղերի վրայով նվազագույն բարձրության վրա հրաձիգներով բեռնավորված ուղղաթիռները շարունակում են իրենց թռիչքները:

Ըստ ժողովրդական դատգամավորի, դա բացարձակ սադրանք է եւ կատարվում է բնակչությանը խուճապահար անելու միտումով:

Կամչատովը եւ մի շարք հասարակական կազմակերդությունների ներկայացուցիչներ երկրի բարձրագույն ղեկավարությունից դահանջում են դադարեցնել բոլոր տեսակի ահաբեկչությունները եւ հայտնել Ադրբեջանի տարածքում տեղակայված 4-րդ բանակի ղեկավարության հետ հանդիդման տեղն ու ժամանակը:

Վերիշենից լրագրող Ալեքսեեւսկին հաղորդում է, որ վերջին օրերին նորից սկսվել է խաղաղ բնակչության գնդակոծությունը զինվորական ուղղաթիռներից: Վիրավորվել է 70-ամյա մի ծերունի:

Զորամասերումները խանգարում են բերքահավաքի աշխատանքներին:

Ոչնչանում է մոտ 500 տոննա հաց եւ 1800 տոննա կարտոֆիլ: Ինչդես երեւում է, զինվորականների միջոցով կազմակերդվում է տեղարբակների ձմեռային սովը: Մարտական ուղղաթիռները դտսվում են նաեւ Ղարաչինար, Հայ Բորիս գյուղերի վրա:

Երեկ Ստեփանակերտից մեզ հաղորդեցին, որ հայ դարտիզանական ջոկատի մարտիկները Խանձաձորից դուրս են շդրտել ադրբեջանցի օմոնականներին: Գործողությունը տեւել է 3-5 ռդդ, ադրբեջանցիները գյուղում թողել են 1 զրահամեքենա: Ազատվել է նաեւ Գոյանլար գյուղը: Այնուհետեւ լուր ստացվեց, որ վերը նշված հայկական գյուղի ազատագրումից հետո, ՆԳՆ զորքերը հարձակվել են հայ դարտիզանների ջոկատի վրա: Հարձակման արդյունքների մասին այլ տեղեկություններ չկան: ■

digitised by A.R.A.R.@

Դիմորդները պահանջում են ազնվություն, բուհերը՝ մասնակցություն, իսկ պետական կոմիտե՞ն...

Ասում են, թե հայ ժողովուրդը շատ է սիրում իր զավակներին կրթել եւ ամեն ինչ անում է, որ նրանք ստանան բարձրագույն կրթություն: Այդ խաղախիրթ, բայց երբեմն ծայրահեղության հասնող երեւույթի առաջն առնելու համար երգիծաբաններն առաջարկում են մի շատ յուրօրինակ հոգեբանական գործողություն. այն է՝ ամեն նորածնի ծննդյան վկայականում գրել. ազգությունը՝ հայ, կրթությունը՝ բարձրագույն, որպեսզի ծնված օրվանից երեխան «լիարժեք» մեծանա եւ բուհ չընդունվելու դեպքում էլ լավատես մնա:

Այս տարի հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության քննությունների նոր համակարգը խոստանում է դրական տեղաշարժեր: Ծնողների ու դիմորդների մեծ մասն այն ընդունում է որպես դրական նորույթ, իսկ մի մասն էլ համառորեն պնդում, թե քննությունների գնահատման կարգը հեռու է անաչառ լինելուց: Իսկ ի՞նչ են մտածում բուհերի ղեկավարները: Այդ ափիթով որոշեցինք այցելել երեւանի բուհերից մեկը. ընտրեցինք ժողովրդական տնտեսության ինստիտուտը, որտեղ էլ հանդիպեցինք ինստիտուտի ռեկտոր ***Թորգոմ ՆԱԼՉԱՋՅԱՆԻՆ****, պրոռեկտորներ* ***Միհրդատ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ*** *եւ* ***Գրիգոր ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ****: Նշենք, որ մեր բոլոր զրուցակիցներն էլ վերջերս են զբաղեցրել այդ պաշտոնները:*

- Որո՞նք են այս տարվա ընդունելության քննությունների նոր եղանակների լավ ու վատ կողմերը, ի՞նչ լուրջ թերություններ կան,- դիմեցի իմ զրուցակիցներին:

Թորգոմ ՆԱԼՉԱՋՅԱՆ

– Այդ համակարգը նոր է եւ առաջին տարին է կիրառվում: Բավական շատ դրական կողմեր ունի այն: Իմ կարծիքով, ստեղծված են բարենպաստ պայմաններ լավ իմացող դիմորդների ընդունելության համար: Բացասական երեւույթների ճանապարհը չէի ասի, թե ամբողջովին փակված է, բայց հասցված է նվազագույնի: Դիմորդների ծնողների կողմից այն լավ է ընկալվել: Իհարկե, դեռ կան դժգոհներ: Դրանք հիմնականում հասարակության այն խավերն են, որոնք այդ ճանապարհներով հնարավորություններ ունեին իրենց երեխաներին ընդունել տալու, հիմա այդ ճանապարհները հիմնականում փակված են: Բայց կան նաեւ շատ բերություններ: Օրինակ, իմ կարծիքով, հիմնական թերությունները վերաբերում են աշխատանքի կազմակերպչական մասին: Դա, թերեւս, բացատրվում է նրանով, որ այդ մեխանիզմը առաջին տարին է աշխատում: Հանրապետությունում բարդայհոգեբանական մթնոլորտը բավական սրվեց, երբ քննությունները մեկ շաբաթով հետաձգվեցին: Վատ է նաեւ այն, որ բուհերը իրենց դերը բացարձակապես կորցրին այս քննությունների ժամանակ: Ես ինքս կողմ էի, որ բուհերում քննություններ չլինեն, բայց բուհերին այսքան մեկուսացնելն էլ մյուս ծայրահեղությունն է:

Այս տարի, ես կարող եմ պաշտոնապես հայտարարել, Հայաստանի գրեթե բոլոր բուհերի համար ընդունելության քննությունները կատարեց Երեւանի պետական համալսարանը: Դա էլ ճիշտ չէ: Երբ կոլեգիայում այս հարցը քննարկվում էր, ես առաջարկեցի, որ բոլոր բուհերից ներկայացուցիչներ լինեն այդ հանձնաժողովներում: Պարզվեց, որ դրանք հիմնականում կազմավորվել են համալսարանից: Ոչինչ չունենալով համալսարանի դասախոսների, նրանց օբյեկտիվության դեմ, ուզում եմ նշել, որ եթե շրջանառության մեջ է մտնում այսպես ասած «վարկաբեկված» բուհի գաղափարը, ապա ասենք, որ համալսարանն էլ մաքուրներից չէր: Ուրեմն, չի կարելի ասել՝ մի բուհը վարկաբեկված է, այդտեղից չենք վերցնում, մյուսը լավն է: Հանրապետությունում դա ընդհանուր ցավ էր, ընդհանուր սոցիալական չարիք, որը բոլոր բուհերում էլ ունեցավ իր բացասական դերը: Ուստի, բոլոր բուհերի դասախոսների ներկայացուցչությունը պետք է ապահովվեր: Բացի դրանից, կար ընդհանուր հանձնաժողով, որի անդամ էին բուհերի ռեկտորները: Քննությունների ընթացքում մենք ոչ մի անգամ չհավաքվեցինք եւ ոչ մի տեղեկություն չստացանք, թե ինչպես են ընթանում դրանք: Ես նույնքան տեղեկություններ ունեմ քննությունների, մրցույթի մասին, ինչպես է անցնում, ինչքան դուրս մնացողներ կան եւ այլն, որքան դուք: Քննությունների ընթացքի՝ մասին ոչ մի տեղեկություն բուհ չի մտնում: Սա ահռելի թերություն է: Կարծում եմ, որ եթե այս մեխանիզմը շարունակի գործել, ապա հետագայում նշված թերությունները պետք է վերացվեն:

Հիմնական հարցերից մեկն էլ դիմորդներին եւ նրանց ծնողներին ճիշտ եւ ժամանակին տեղեկությունով ապահովելն է, որի բացակայությունը տեղիք է տալիս անախորժ խոսակցությունների:

Մեր բուհի հանձնաժողովը փաստորեն աշխատել է ողջ քննությունների ընթացքում, բայց մեզ դիմած մարդկանց հիմնական պատասխանը եղել է՝ «Չգիտենք»:

- Դուք հարց չե՞ք բարձրացրել, որ բուհը ապահովեն անհրաժեշտ տեղեկությամբ:

– Ես դիտավորյալ ակտիվություն չցուցաբերեցի, մտածեցի, որ այդ ակտիվությունը այլ կերպ կարող է մեկնաբանվել: Քննությունների ընթացքում մեր ինստիտուտի աշխատողներն անգամ այլ գործերով կոմիտե չեն գնացել: Հանկարծ մեկը կմտածի, թե ինստիտուտի ղեկավարները գնացին այնտեղ, ինչ-որ գործեր ունեին... Պատշաճապես էլ իրենք խորհրդակցելու չեն կանչել:

- Բայց նման վերաբերմունք միայն ձեր ինստիտուտի նկատմա՞մբ է դրսեւորվել:

– Ոչ, բոլոր ինստիտուտների: Եթե վստահելի չենք, բող հանեն: Ի՞նչ է, քննողները մեզնից վստահելի՞ են: Թեեւ մյուս կողմից էլ չեմ ուզում, որ վիրավորվածի նմանվենք, ընդհակառակը, շատ ուրախ ենք, որ չենք ընդգրկվել այս գործի մեջ: Բայց ընդհանուր գործի շահից ելնելով, ուզում ենք, որ բուհին այսքան մեկուսացնելը ճիշտ չէ: Ժողովրդի մեջ դարձյալ խոսակցություններ են տարածվել, որ հիմա էլ 3-4 հոգու գերիշխանություն է դարձել: Այս բացասական միտումը կա, եւ կազմակերպիչները կարող են տուժել հենց այս կարծիքից:

- Նախապես կոլեգիայի նիստերում չե՞ք համաձայնեցրել, թե տեղեկության ի՞նչ փոխանակում պետք է լինի բուհի եւ կոմիտեի միջեւ:

– Կոլեգիայի նիստում հաստատել ենք առարկայական հանձնաժողովների նախագահներին: Դրանց անդամների մասին մենք բացարձակ տեղեկություն չենք ունեցել, բուհերը չեն մասնակցել: Համաձայնեցման հարցեր չեն եղել, միանգամից հաստատվել է: Մեզ ասել են. *«Ամեն ինչ արվել է, ամեն ինչ կարվի, դուք ցուցակները կստանաք»:* Մենք էլ սպասում ենք այդ ցուցակներին:

- Բալային համակարգի մասին ինչ կասեիք:

– Նախկին միավորներն ուղղակի չորսով բազմապատկված են՝ հասցված են 20-ի: Եւ եթե մենք, նախկին 2-ը 4-ով բազմապատկում ենք, դառնում է 8, որը նախկինում անբավարար էր, հիմա դրական է համարվում: Այսինքն, շատ ավելի մեղմ են, քան նախորդ տարիներին: Սա լավ է, թե վատ, առայժմ դժվար է ասել, քանի դեռ մրցույթ չի եղել: Թեւ պարզ է նաեւ, որ կիսեշացնի մրցույթը կազմակերպելու հարցը, եւ միճելի հարցեր ինչ կլինեն:

Գրիգոր ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

– Մեր բուհի նկատմամբ անվստահությունը թեեւ գալիս է նախորդ տարիների տարբեր տեսակի երեւույթներից, բայց դրանից եզրակացություն անել եւ բոլորին նույն մեղքի տակ գցել էլ չի կարելի: Որովհետեւ կան շատ ազնիվ, շահագրգիռ, նվիրված մարդիկ, ովքեր պատրաստ են ամենակատարյալ ձեւով այդ գործը կազմակերպել, եւ գոնե նրանց համար դա վիրավորական է: Որպես օրինակ կարող եմ բերել այս տարվա մեր բուհի նախաաստրաստական քննությունները, որոնք անցկացվեցին իդեալական ձեւով:

Դրանում համոզվեցին նաեւ քննություններին ներկա գտնվող պետական կոմիտեի եւ Գերագույն խորհրդի ներկայացուցիչները: Բալային համակարգը, իր բոլոր առավելությունների հետ, ունի մի մեծ թերություն՝ գնահատման ընթացքում սխալվելու հնարավորությունները մեծ են: Հատկապես բանավոր քննությունների ընթացքում: Եւ եթե նախկինում սխալվելու 4 հնարավորություն կար՝ 2, 3, 4, 5, ապա 20-ի դեպքում այն բառապատկվում է եւ հասցվում է 16-ի: Դա եւ օգուտ է, եւ վնաս է դիմորդին: Խիստ դժվար է որոշել՝ 13, 14 թե 15: Եւ վատ է նաեւ, որ այդ համակարգը լավ չխարդավեց հանրապետությունում եւ չմարսվեց դիմորդների կողմից:

Կարեւոր թերություն է նաեւ կոոպերատիվ բուհերի գոյությունը: Եթե պետականներում ամեն ինչ արվում է կենտրոնացված, եւ քննությունները տեւում են 20 օր, ապա կոոպերատիվ բուհերում մի քանի օր են տեւում, եւ պետական բուհ չընդունվածները հետեւությամբ ընդունվում են ոչ պետական այդ հաստատությունները:

Ինձ թվում է, կոոպերատիվ բուհը պետք է տարբերվի միայն վճարման կարգով: Մինչդեռ, օրեցօր սկսի նման աճող ոչ պետական բուհերը, որոնց թիվն արդեն անցնում է 30-ից, մեծ պայքար են ծավալել, որպեսզի իրենց շրջանավարտների դիպլոմին տրվի պետականի կարգավիճակ, ընդունվողներն ազատվեն բանակում ծառայելուց: Իմ կարծիքով, եթե նրանք մրցակից են, ապա պետք է մրցեն հավասար պայմաններով: Իսկ հիմա ինչ է ստացվում. կոոպերատիվ բուհերին տվել են իրավունքներ, իսկ պետական բուհերի իրավունքները սահմանափակվել են:

Սա հարցի մի կողմն է: Մյուսն այն է, որ այդ բուհերը չունեն համապատասխան բազա, կադրեր, ծրագրեր: Այն ծրագրերը, որոնց պատրաստման վրա մենք կորցրել ենք 6-7 ամիս, նրանք հեշտությամբ վերցնում են մեզանից եւ օգտագործում: Եւ տարբերությունն այն է, որ այնտեղ դասախոսները բարձր աշխատավարձ են ստանում:

Այսօր գործող ոչ պետական բուհերի նպատակը ազգային շահը չէ, այլ գրպանի շահը: Ուղղակի, օգտագործելով մեր ժողովրդի սոցիալական, տնտեսական ծանր դրությունը, կոոպերատորները հմինականում լուծում են իրենց անձնական շահերը: Այստեղ մի այլ կարեւոր հարց էլ կա. արդյոք մեր 3,5 մլն. ժողովրդի համար 13 պետական ու 30-ից ավելի ոչ պետական բուհերի քանակը շատ չէ՞: Չկա՞ արդյոք, մի մարմին, որ հաշվարկ կատարի, թե դրանց կարիքը կա՞, թե ոչ:

Միհրդատ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ավելին ասեմ, մենք արդեն տեղեկություն ունենք, որ այդ բուհերից շատերը, որպեսզի իրենց շրջանավարտներին կարողանան պատշաճական դիպլոմներ տալ, պայմանագրեր են կնքում Ռուսաստանի զանազան բուհերի հետ, որպեսզի օգտվեն դրանց իրավունքներից: Դա ուղղակի ազգակործան քաղաքականություն է: Ես կարող եմ հայտարարել, որ ոչ մի բուհ չի վախենում մրցակցությունից, բայց այն պայմանով, որ այն լինի հավասար պայմաններով:

Եւ հետո, այդ ինչպես եղավ, որ պետական բուհերի պլանները 50 տոկոսով կրճատվել են, այդ թվում նաեւ մերը, բայց ոչ պետական բուհերը սկսել են տնտեսագետներ պատրաստել:

- Դուք ինքներդ չե՞ք փորձել աշխատել նման բուհում:

– Եղել են հրավերներ, բայց չեմ գնացել:

- Իսկ կոնկրետ ի՞նչ եք արել, որպեսզի դիմորդը նախընտրի գալ ձեզ մոտ, այլ ոչ թե կոոպերատիվ բուհ:

– Մենք վերակազմել ենք մեր ինստիտուտի բոլոր ծրագրերը, ձեւավորվել են նոր, այսօրվա պահանջներին համապատասխանող մասնագիտություններ, այդ թվում՝ շուկայականացման (մարկեթինգ) եւ կառավարման (մենեջմենտ), միջազգային տնտեսական հարաբերությունների, դրանց զուգահեռ փոխվել են նաեւ ուսումնական պլանները, տրագրության մեջ են արտասահմանյան հեղինակների դասագրքերը: Պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերապատրաստման աշխատանքներն ընթացքի մեջ են, արդեն գործում է բիզնեսի դպրոցը, որը հիմնել է IBM ֆիրման: Այնպես որ, մենք ամեն ինչ արել ենք, որ բավարարենք մեր դիմորդների պահանջները:

Հարցազրույցը վարեց
Գագիկ ՍՍՍՏՐՅԱՆԸ

Քանդելը «առաքինություն» է, իսկ շինե՞լը...

Թերթի օգոստոսի 7-ի համարում տպագրված Հայաստանի հեռուստառադիոհեռկոմի նախագահի տեղակալ Տիգրան Պասկեւիչյանի հետ հարցազրույցից հետո խմբագրություն հնչեցին զանգեր, եկան այդ բնագավառի հին ու նոր աշխատողներ՝ վրդովված, վիրավորված... Թերթը, չհավակնելով դատավորի դերին եւ հավատարիմ իր սկզբունքին, տեղ է տալիս նաեւ հակառակ կողմին:

Հարգարժան «Ազգ», մեր ժամանակները շուտ են տվել ամեն բան, շատ բան նորանումփոխվում է: Օրերի թելադրանքով վերածնվում են հնամենի ժանրերը՝ պարոդիան, էպիգրամը, առակը, կարծում եմ ինչ-որ մեկը ճանապարհ է դնում ինտերմեդիան, մյուսը՝ սատիրավեթը:

Այսօր չկա՞ն բոչկա նիկոլները, մեռելի եղոքները: Սազոյի Համոն էլ կա, նահրյան հեղինակի Սիլեսն ու Պիերոն էլ կան, միայն ինքը՝ Չարենցը չկա:

«Ազգ»-ի մեջ կարդալով հեռուստառադիոհեռկոմի նախագահի տեղակալի հետ հարցազրույցը, նոպատակադրվեցի հանդես գալ քո էջերում, եւ նյութն այժմ առաջ ուրվագծվեց պամֆլետի ժանրով: Սա էլ, ինչ խոսք, օրերի ծնունդ է, թեեւ ես դա ուղղակիորեն կապում եմ թերթի մեջ զետեղված տեղակալի լուսանկարի հետ. այն ինձ ասում է. **«Ռաֆի՛կ, ես արժանի եմ միայն պամֆլետի»:**

Ես ուզեցի «Ազգ»-դ վերցնել ու տանել հեքիմների, գրքացների, սոիրիսիզմով զբաղվողների մոտ եւ նրանում զետեղված մորուքավորին ցույց տալով՝ հարցնել՝ ո՞վ է, ի՞նչ է, ո՞ւմ է հարկավոր, եւ նրանցից մեկը հավանաբար կասեր, որ եթե, օրինակ, հանրապետության վարչապետը համաձայնի, որ այդ դեմքը իր դիմաց նրստի եւ հեռուստագույց անի, ապա սա վարչապետին յուրաքանչյուր 3,5-4 բառ ասելու համար հայացքի երկու երրորդն ուղղելու է ծածկաթղթին (ձեռքով, ափով, կրծքով ծածկած թղթին), մնացածը՝ վարչապետին, եւ դրանից սաստկելու է միայն ծիծաղելի տեսարան:

Տեղակալը հարցազրույցում այսպիսի միտք ունի. **«եթեր էին դուրս գալիս բոլորը, անկախ բնախոսական արատներից»:**

Տեղակալը գիտի՞, որ բնախոսությունը, կազմախոսությունը եւ այլն գիտություններ են, բայց հենց այս տեսակետից էլ նմանօրինակ «գիտական» օրինակներով լի եր վարչապետի հետ հարցազրույցը եւ այն մնացած «ֆիզիոլոգիական» հաղորդումները, որոնց զավեշտով ու զարմանքով անդրադարձել է մամուլը: Ճիշտն ասած, այս հուսահատությունն զգացվում է նաեւ հարցազրույցի հեղինակի մեջ, զգացվում է, որ ոչ մի սպասելիք չկա հեռուստատեսությունից:

Եւ հետո... **«ես ապահովում եմ պետական քաղաքականությունը հեռուստատեսությունում», «Այսօր ես մեր ունեցած քանկագին սարքավորումները երբեք սահման չեմ ուղարկի», «Սահմանամերձ շրջաններ ուղղաթիռով թղթակիցներ ուղարկելն ինձնից մի ամբողջ աշխատանքային օր է խլում», «Ինձ պիտի հայտնեն՝ ես չեմ կարող անընդհատ զանգ տալ այս ու այն կողմ»:**

Տեսնո՞ւմ եք, որքան է կարեւորում իր դեմքն ու դերը տեղակալը. ԵՍ, ԻՍ, ԻՆՁ:

Եւ այս ամենի համար չի՞ վիրավորվում նախագահը՝ դոկտ. Հ. Հովհաննիսյանը:

Ո՛չ: Չի կարող:

Իսկ վիրավորվում է շատ բան տեսած, շատ բան սովորած, մեծ փորձ կուտակած մեր ժողովուրդը:

Հ. Հովհաննիսյանի շատ վե՞ջն է, որ կոմիտեի նախագահն ինքն է, բայց «խանդում» են ուրիշները:

Եւ դա անում է մեկը, որի համեստագույնից էլ համեստագույն կարողություններին ոչ ոք ծանոթ չէ, բայց անբարտավանությանը եւ լեզվի իմացությանը կարելի է ծանոթանալ հենց այս հարցազրույցում:

Անդրադառնամ մի մտքի. **«Այսօր ես ունեցած քանկագին** (քանկարժե՞ք - Ռ. Մ.) **սարքավորումները երբեք սահման չեմ ուղարկի»: «Մի քարի կտորը, մի գնդակը բավական կլիներ, որ այդ 100 հազարանոց զորանները դեն գցեն»:**

Իսկ մարդիկ գնում են, ընկնում կրակի տակ, անցնում դարանակալ թշնամու կողքով: Չէ՞ որ դավադիր գնդակները հենց նրանց համար են, ոչ թե քանկարժեք տեխնիկայի:

Եւ վերջապես, ինչո՞ւ են այդ մարդիկ գնում, չէ՞ որ **«Իջեւանում միլիցեսի հետ զրուցելուց»** տեղակալը, ինչպես «Լրաքեր»-ի աշխատակիցներին ասաց նա, եկել է այն համոզման, որ միլիցիոներներն ավելի լավ գիտեն, թե ինչպես պետք է աշխատի «Լրաքեր»-ը, քանի որ. **«դուք գիտե՞ք, թե մեզ ի՞նչ ծեծ ու ջարդ են տալիս «Լրաքեր»-ի յուրաքանչյուր հակաադրբեջանական հաղորդումից հետո»:**

Ես այս մասին նույն օրը պատմեցի Վարդգես Պետրոսյանին, նա ասաց. **«Ուրեմն պետք է ադրբեջանասիրական հաղորդումներ անենք»:**

«Փորձիր որեւէ մեկին ասել, որ այստեղ չի աշխատելու, նա պարզապես քեզ դաշի կտա»:

Միշտ էլ յուրաքանչյուրին իր արածի համար իր դաշը սպասվում է:

Բայց տեղակալն իրեն հարցնո՞ւմ է. **«Ես ո՞վ եմ ախար, ինչի՞ տեր եմ, իրավունք ունե՞մ որեւէ մեկին ասելու՝ դու այստեղ չես աշխատելու»:** Թե՞ այդ իրավունքը նրան տալիս է տեղակալի աղշահար աթոռը:

Հիշո՞ւմ եք հանրահայտ բանաստեղծության մեջ ինչպես է ծառս լինում Արամը՝ լսելով բանաստեղծի հարցմունքը, հիշո՞ւմ եք ինչ է կատարվում գեշի հետ:

Այսպես պետք է լինի եւ աթոռը՝ ծառս լինի, փշեր դուրս տա, աջ ու ձախ նետի՝ չհանդուրժելով իր վրա նստող տիրացուին, դեն նետի այնտեղ, որտեղից եկել է, դեռ մի բան էլ այն կողմ:

Հեռուստատեղակալի աթոռին նստողը կամ նստածը ութ տարի է պահանջում **«ինչ-որ բեմադրիչի որակավորում ստացածից»**, որպեսզի նա աշխատի հեռուստատեսությունում, իսկ ինքը միայն երեկ, միայն մի քիչ առաջ այստեղ գալով այնպիսի բեռներ է բերել, որոնց ծանրության տակ կքել ու փուլ է գալիս հայոց մշակույթի արժեքներից մեկը:

Տեղակալը իրեն համարում է **չինովնիկ** «բառիս բուն իմաստով»:

Դեհ, ինչ, համարենք, որ չինովնիկների դինաստիան մի իշխանությունից մյուսին է անցնում՝ նրա ներկայացուցիչներից մեկին զրկելով բանաստեղծական ազատությունից եւ այլ վայելքներից, այդ ամենը չինովնիկական երջանկաբեր անփութությամբ փոխադրելով նորս՝ հեռուստատեսություն, նաեւ հենց այն առանձնասենյակը, ուր թագավորում է տեղակալը եւ ուր տեղի ունեցող վաղխանալիայի պատճառով մի օր դռներից այս կողմ ավելի քան երկու ժամ սպասել եմ նրան - ո՞ւմ...

Ես չէի կարող սա չասել, որովհետեւ նման մոլուցքների դեպքում քարը քարի վրա չի մնա:

Մեր օրերում վիրավորական է որեւէ մեկին չինովնիկ ասելը, բայց ես այս դեպքում էլ համաձայն չեմ, քանի որ այդ կոչումը նույնպես երջանկաբեր է նրա համար: Ուստի եւ՝ շարունակություն:

Ռաֆ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

digitised by A.R.A.R.@

«Ես արդեն հաղթել եմ», ասում է ԱԻՄ-ի նախագահ Պարույր Հայրիկյանը

Օգոստոսի 10-11-ին տեղի ունեցավ Ազգային ինքնորոշում միավորման Նավասարդյան խորհրդաժողովը:

Հավնեմբերյամբ հանդես եկան ԱԻՄ-ի նախագահը, հանձնախմբերի դասախոսները:

Քննարկվեցին կանոնադրական եւ կազմակերպչական հարցեր, կայացան ԳԽ դասգամավորական բափուր տեղերի համար ԱԻՄ-ի կողմից առաջադրվող թեկնածուների ընտրություններ, ՀՀ նախագահական ընտրություններում թեկնածու առաջադրվեց Պարույր Հայրիկյանը:

Խորհրդաժողովի մասնակիցները եղան Գառնիում եւ Ծիծեռնակաբերդում:

Վերջում ընդունվեց ուղերձ՝ Հայաստանում գործող քաղաքական կազմակերպություններին: Խորհրդաժողովի աշխատանքների ավարտից հետո դիմեցինք Պարույր Հայրիկյանին:

– Նավասարդյան խորհրդաժողովը որքանո՞վ հաջողվեց ԱԻՄ-ին եւ ի՞նչ տվեց, ի՞նչ ծրագիր մշակվեցին:

– Ընդհանրապես, ոչ միայն ԱԻՄ-ի համար, Հայաստանում գործող ժողովրդավարական կազմակերպությունների համար այս հավաքը բացառիկ է եւ հարցադրումներով, եւ կազմակերպվածությամբ ու նախապատրաստվածությամբ: Այս բացառիկությունը ձեռք է բերվել մեծ նյութական զոհողությունների գնով: Քննարկված հարցերը սերտորեն առնչվում են մեր աղգայի, մեր ընդհանուր ճակատագրի հետ: Դրանք ես համարում եմ հաջողված, մանավանդ այն տեսանկյունից, որ որոշակի վարանում աղրող, քաղաքական կյանք մուտք գործած ԱԻՄ-ականներն այստեղ դպրոց անցան: Ընդունված որոշումները կարեւոր էին, քանի որ դրանք կազմակերպության երջանակներից դուրս էին գալիս, եւ բացի կանոնադրական որոշակի ճեռումներից, որոնք հասակեցրին կազմակերպության այսօրվա կառույցը, դասգամավորական տեղերի համար մենք առաջարկեցինք որոշակի թեկնածուներ: Նրանց մի մասն անկասկած կհաղթի ընտրություններում, եւ նրանք արդեն այսօր ոտքի է սկսեն համատեղ աշխատել: Այսօր Գերագույն խորհրդի նախկին ԱԻՄ-ականները, որոնք զգալի թիվ են կազմում, ընտրվել են ոչ ԱԻՄ-ի հովանավորությամբ կամ նախաձեռնությամբ, եւ այդ դասճառով նրանք Ֆրակցիայի, դաղլամենտական թեւի զգացողությունը չունեն: Առաջադրվեց եւ վերջնականապես հաստատվեց իմ թեկնածությունը որդես Հայաստանի

թյան հարցը, եւ դա թողնված է իմ դասախանատվությանը, ինձ է վստահված:

– Իսկ եթե նախագահական ընտրություններում համաձայնվեք տալ ձեր թեկնածությունը, ո՞ր ճանով է երաշխավորված ձեր հաղթանակը:

– Ազգ, ժողովրդավարական ընտրություններում... կարելի է ասել, որ ես արդեն հաղթել եմ: Ես Հայաստանի նախագահն եմ: Նախագահ նշանակում է մարդ, որը ճանաչում է քաղաքականություն եւ իրականացնում է այն: Դուք դժվար թե գտնեք որեւէ մեկին, որ այսօր ավելի աշխատած լինի ազգային քաղաքականության համար, ավելի ճիշտ կանխանշած լինի այդ ծրագրերը: Այսօր Հայաստանը գնում է անկախության: Որպես քաղաքական կազմակերպության ղեկավար, ես ամենայն դասախանատվությամբ կարող եմ ասել, որ Հայաստանը գնում է իմ առաջադրած ճանապարհով: Նախագահը սրճոց չէ, որ իսկ է իրականացնում իր առաջադրած քաղաքականությունը: Ինքը առաջադրում է, ազգը համատեղ իրականացնում: Այդ իմաստով, ես արդեն ընտրված նախագահ եմ: Մնում է միայն այդ փաստը, ավելի ճիշտ՝ այդ քաղաքական երեւույթը իրողություն դարձնել:

– Այսքան բանավեճ գնաց ԱԻՄ-ը կուսակցության վերածելու կամ ձեւափոխելու մասին: Ձեր կարծի՞քը:

– Այդ հարցի քննարկումը հետաձգվեց: Իմ կարծիքով, ԱԻՄ-ը իսկապես այն է, ինչ պետք է լինի: ԱԻՄ-ի ներսում կա կուսակցություն: Այսօր այստեղ հավաքված բոլոր խորհրդաժողովականները ԱԻՄ-ի կուսակցականներն էին, այսինքն բոլոր կուսակցականների ընտրյալները, որոնք կազմում են ԱԻՄ-ականների 20 տոկոսը:

Եւ ասենք, ԱԻՄ-ի գործունեությունը իր նախկին սկզբունքներով՝ Ազատ ու Անկախ Հայաստանի սկզբունքներով չի հակասում, որպեսզի հիմա ընդունվի կոլեկտիվ անդամի գաղափարը, եւ հնարավոր է, որ առաջիկայում որոշ կազմակերպություններ դառնան ԱԻՄ-ի կոլեկտիվ անդամ:

– Խորհրդաժողովի նշանակությունը ոչ միայն ԱԻՄ-ի աղագայի, այլեւ այս փուլում քաղաքական դայքարի հետ էր կապված:

– ԱԻՄ-ի դիրքորոշումները շատ կարճ ժամանակամիջոցում դառնում են համազգային ծրագրեր: Նախկինում եթե դա տեւում էր 10 տարի, հետո դարձավ 2 տարի, վերջին երջանում 4-6 ամիս է տեւում: Իսկապես, ԱԻՄ-ի այս խորհրդաժողովի քննարկումները, որոնք շատ գործնական բնույթ էին կրում, կարող են լինել նշանակալից ամբողջ Հայաստանի համար, մասնավորապես այն հարցադրումը, որ ԱԻՄ-ը առաջիկայում պետք է դայքարի պետական կառույցները տեղերում վերափոխելու եւ նախագահական կառույցին համադասախանեցնելու համար: Անհեթեթություն կրսացվի, եթե մենք վաղը ընտրենք նախագահի եւ նրան դնենք ճգնաժամային իրավիճակի մեջ: Նա չունի նույն սկզբունքներով ընտրված տեղական իշխանություններ: Օրինակ, վաղուց հասունացած այս խնդիրը վաղը կդառնա համազգային ծրագրի անբաժանելի մասը: Ազգային բանակի հարցը նույնպես հասունացած է, այստեղ խոսվեց դրա մասին: Բայց այդ ամենը թողնում ենք աղագա նախագահի ուսերին, դա արդեն դառնում է նախագահական ծրագիր: Կարեւորագույնը, իհարկե, Սահմանադիր ժողովն է: Հետո, մեր քարյացակամ մոտեցումը բոլոր կազմակերպություններին նույնպես իր դրական դերը պետք է ունենա: Մեր ընդունելիք ուղերձում մենք, անկասկած, պիտի այդ քարյացակամ ոգու դրսեւորման մի բացառիկ օրինակ տանք:

Ի դեպ, առավոտյան, երբ խորհրդաժողովականներով ուղեւորվեցինք Գառնի, տեղի ունեցավ մի անցանկալի միջադեպ: Այսպես կոչված ինչ-որ հեքանոս հայեր որոշեցին փակել տաճարի մուտքը, որպեսզի քրիստոնյա հայերը մուտք չգործեն: Բայց նրանց խուլիգանությունը սանձահարվեց, եւ նրանք ստացան իրենց արժանի պատիժը: Լավ է, որ ամեն ինչ բարեհաջող վերջացավ:

– Խորհրդաժողովը կդառնա՞ ավանդական:

– Ընդհանրապես ԱԻՄ-ի խորհրդաժողովները պետք է տեղի ունենան փետրվարի 18-ին, մայիսի 28-ին եւ օգոստոսի 11-ին: Մյուս խորհրդաժողովները կարող են լինել միայն արտակարգ: ԱԻՄ-ի խորհրդաժողովները նախատեսված են անցկացնել տարին երեք անգամ: Նախկինում այդպիսի որոշակի թիվ չկար:

– Խորհրդաժողովում նշվեց նաեւ, որ ԱԻՄ-ը պետք է միավորի բոլոր ազգային-դեմոկրատական ուժերին:

– Դա մասնավոր կարծիք էր: Մենք նախկինում կարծում էինք, օրինակ, որ պետք է Ռամկավար ազատական կուսակցության հետ համագործակցենք կամ միավորվենք: Այդպիսի կարծիք կար: Հիմա, այս փուլում, մենք եկանք այն եզրակացության, որ պետք է համագործակցենք դաշնակցության հետ Սահմանադիր ժողովի գաղափարի շուրջը:

– Իսկ ի՞նչ կասեիք վարչապետի հայտարարած ազգային-ժողովրդավարական միության մասին:

– Դա Ազգային ինքնորոշում միավորում ստեղծելու նոր փորձ է: Նախկինում ստեղծվեց «Ղարաբաղ» կոմիտե, հետո ԱԻՄ-ի գաղափարները վերցնելով՝ փորձեցին ստեղծել ՀՀԾ: Հիմա դարձյալ, փոխանակ միանգամից միանան Ազգային ինքնորոշում միավորմանը, որն իր բացությամբ եւ մաչելիությամբ այդ բոլոր հնարավորությունները տալիս է, մարդիկ ձգտում են ինքնահաստատման. ինձ համար սա միանշանակ է: Ես դա չեմ ողջունում: Ես դա կողջունեի, եթե ինքն այդ աներ տանից հինգ տարի առաջ: Բայց երբ մեր ազգը ուներ այսպիսի հարստություն՝ ԱԻՄ-ը, պետք է այդ հարստությունը, այդ աղամանը վերցնել ու հոկել եւ ոչ թե ամեն կերով հրել աղբանոց: Ես սա համարում եմ մի ձախորդ փորձ: Ցավում եմ, որ Վազգեն Մանուկյանը եւ Լեւոն Տեր-Պետրոսյանը այդպիսի հակամարտության մեջ են եւ կրկնում եմ, մենք պետք է մեր դասախանատվությունից մեկն այսօր համարենք այն, որ հակամարտությունը չհասնի անընդունելիության, փոխադարձ բացասման մակարդակի:

Զրույցը վարեց Հակոբ ՍԱՍԱՐՅԱՆԸ

ՀՀՇ-ի երջանային արտահերթ կոնֆերանսը

Օգոստոսի 10-ին Սեւանի մշակույթի տան դահլիճում կայացավ Հայոց Համազգային Շարժման երջանային կազմակերպության արտահերթ կոնֆերանս:

– Այսօր, երբ բարունակում ենք ավելի ու ավելի մոտենալ սեպտեմբերի 21-ին, կենտրոնը ուղիղ համեմատական քայլեր է ձեռնարկում Արցախում,- իր ելույթում ասաց ՀՀՇ խորհրդի անդամ, ՀՀ ԳԽ-ի կողմից երջանի հողային բարեփոխումների եւ սեփականաշնորհման աշխատանքներին լիազորված անձ Սամվել Գեւորգյանը: Դրա համար էլ հանրաքվեի մեր դասախանը պետք է լինի «այո»ն, իսկ Արցախում առայժմ դարտիզանական դասերազմը: Հայաստանը հանրաքվեի է գնում ոչ թե կուրորեն լինելու, այլ ազատ ու անկախ ապրելու, որի համար էլ դատապարտում եմ «սամոտային քաղաքականության» գաղափարախոսների քարոզչությունը: Ցավոք սրտի, ներկայումս հանրապետությունում իրերն ու երեւույթները իրենց անունները չեն ստանում, իսկ ստանալուց էլ հաճախ են մամուլում միտումնավոր փոխում դրանց հասցեատերերին: Ասելիս կոնկրետացնելու համար նշեմ, որ դրական տեղաշարժերը, կատարված ՀՀՇ-ի օրոք եւ նրա անմիջական մասնակցությամբ, ժխտվում են կամ նենգափոխվում: Թերեւս այդ ամենին է ծառայում այն «քարոզչիցը», որ շարժմանը հաղորդեց վարչապետը, ստեղծելով, ըստ իրեն, ավելի գիտակից ու նպատակամղված մի խումբ: Խոսքս Ազգային ժողովրդավարական միության մասին է: Վարչապետը խիստ սխալ դուրս եկավ իր տնտեսական քաղաքականության մեջ, որովհետեւ նա կարծում էր, թե կարող է հենվել նոր ձեւավորվող ազգային բուրժուազիայի վրա, բայց վերջինիս կողմից դրական քայլը եղավ լոկ պետական վարկերի ստացումը եւ ապանձին-ապանձին մենաշնորհների ձեռքբերումը:

Արտահերթ կոնֆերանսում խոսվեց Սեւանում կատարվող սեփականաշնորհման աշխատանքների մասին, նշվեց, որ երջանային ենթակայության տաքը գյուղերից ինքնում սեփականաշնորհման աշխատանքներն ավարտվել են:

Այնուհետեւ արտահայտվեց այն միտքը, թե տեղաբնակների խոր սոցիալական դժգոհության պատճառը ոչ թե հանրապետությունում իշխանության գլուխ անցած ՀՀՇ-ն է, այլ նախկին սովորությունները բարունակող տեղի համայնավարական վարչակարգը:

Կոնֆերանսում ելույթ ունեցավ համայնավար Արթուր Լեւոնյանը: Նա մասնավորապես սխալ համարեց վարչապետի հասցեին կոնֆերանսում հնչած «տոտալիտար նոր համակարգի հայր» արտահայտությունը:

Վիգեն ԱՐՄՈՒՏՅՈՒՆ
Մեր թղթակ.

ՌԱԿ-ի ղեկավարներն այցելեցին Կումայրի

Ռամկավար ազատական (լիբերալ-դեմոկրատական) կուսակցության գաղափարախոսությունն ու տնտեսական ծրագիրը Հայաստանի ներկա քաղաքական ու տնտեսական համակարգում իրոք որ վճռական դեր ու նշանակություն ունի: Այս գիտակցության թելադրանքով էր, որ օգոստոսի 12-ին, Կումայրիի տեքստիլագործների մշակույթի պալատում, ՀՌԱԿ-ի տեղի «Վերածնունդ» ակումբի նախաձեռնությամբ տեղի ունեցավ հանդիպում, որին մասնակցում էին ՌԱԿ-ի կենտրոնական վարչության անդամ, տնտեսական հանձնախմբի նախագահ, հայտնի բիզնեսմեն ու հասարակական գործիչ ընկ. Վարդան Ուզունյանը, ՀՌԱԿ-ի հիմնադիր խորհրդի նախագահ ընկ. Ռ. Միրզախանյանը, ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավորներ եւ հիմնադիր խորհրդի անդամներ ընկ. Վ. Պետրոսյանն ու ընկ. Պ. Քաջախյանը:

Բացման խոսքից հետո խոսափողը տրամադրվեց ընկ. Ուզունյանին, որը կարճատեւ ակնարկով անդրադարձավ ՌԱԿ-ի պատմությանն ու անցած ուղուն եւ հատկապես ընդգծեց կուսակցության ներդրումներով իրականացած եւ ծրագրված նախաձեռնությունները, որոնք մեծ հետաքրքրություն արթնացրին կումայրեցիների մեջ:

Մշակույթի պալատի դահլիճում հատկապես անհրաժեշտ ու կարեւոր նկատվեց Հայաստանի տնտեսական զարգացման խորհրդի Երեւանի գրասենյակի ստեղծման նախաձեռնությունը: Անդրադառնալով գրասենյակի ստեղծմանը, որը պիտի իրականանա օրերս, ընկ. Ուզունյանը նշեց, որ արտերկրում արդեն, կենտրոն ունենալով Լոնդոնը, գոյություն ունեն տնտեսական մի քանի գրասենյակներ, որոնք մասնաճյուղեր պիտի ունենան Երեւանում եւ այլ երջաններում: Հավելյալ մեկնաբանությամբ նշվեց, որ Երեւանի տնտեսական գրասենյակի ստեղծումով հնարավորություն պիտի ընձեռնվի արտերկրի գործարար երջանակների հետ կապեր հաստատել, գործընկերներ փնտրել, նոր համատեղ ձեռնարկություններ հիմնել եւ, իհարկե, կարգավորել ու համադրել այն անհրաժեշտ ու փոխշահավետ աշխատանքները, որոնք պիտի ծավալվեն ի շահ Հայաստանի տնտեսության զարգացման: Ուրախալի է նաեւ այն, որ մինչեւ տարվա ավարտը կենցաղային հիմիայի լայն պահանջարկ ունեցող մի շարք արտադրություններ եւս պիտի իրականանան:

Հանդիպման երկրորդ մասում տրվեցին մի շարք հարցեր: Պատասխանելով դրանցից մեկին, ընկ. Ուզունյանը նշեց, որ սեպտեմբերի 21-ին տեղի ունենալիք հանրաքվեի ժամանակ անկախության կողմ քվեարկելու դեպքում Հայաստանը, միութենական նոր տնտեսական պայմանագրեր կնքելով, հնարավորություն կունենա միջազգային տնտեսական կապեր հաստատել արտասահմանյան զարգացած մի շարք երկրների հետ, որն անպայմանորեն դրական անդրադարձ կունենա Հայաստանի տնտեսական համակարգում:

Հանդիպման առանցքում տեղ գտան Արցախի հիմնահարցն ու տնտեսական վիճակը, գրեթե մեկ տարվա պատմություն ունեցող Հայաստանի խորհրդարանը, հայ ավանդական կուսակցությունները, ՌԱԿ-ի եւ ՀՌԱԿ-ի փոխհարաբերությունը, հարցեր, որոնց պատասխանեցին ընկերներ Վ. Ուզունյանը, Ռ. Միրզախանյանը եւ Վ. Պետրոսյանը:

Հանդիպումը եզրափակվեց Կումայրիի ժողովրդական գործիքների թեքնական, տեքստիլագործների մշակույթի պալատի «Անի», ժողովրդական պարի խմբերի եւ «Նարեկ» կամերային երգչախմբի ելույթներով:

Երվանդ ԳԱՅՏԱՅԻՆ



Աշխատանքային ժողով Եղեգնաձորում

ՀՌԱԿ հիմնադիր խորհրդի մի շարք անդամներ եւ ՌԱԿ Կենտրոնական վարչության ներկայացուցիչ ընկերներ անցյալ շաբաթ-վերջին եղան Եղեգնաձորում, որտեղ նոր աշխատանքային ժողով գումարեցին մի շարք կարեւորագույն հարցերի շուրջ: Նրանք հիմնականում մշակեցին ՀՌԱԿ-ի պլատֆորմի դրույթներ, որոնք հետագա լրամշակումներից հետո կներկայացվեն ՀՌԱԿ-ի հոկտեմբերին գումարվելիք համագումարի հաստատմանը: ■

digitised by A.R.A.R.@

ՀՌԱԿ-ը եւ լիբերալ դեմոկրատական հայացքների վերածնունդը Հայաստանում

Հայաստանի հանրապետության քաղաքական կյանքի այսօրը լի է բազմաթիվ կուսակցությունների, քաղաքական հոսանքների եւ դրանցից բխող քաղաքական հայացքների բազմազանությամբ: Վերականգնվում են հայ ավանդական կուսակցությունները, ստեղծվում են նորերը, ակտիվանում է հասարակական-քաղաքական միտքը:

Ի տարբերություն Ռուսաստանի եւ մի քանի այլ հանրապետությունների, Հայաստանի քաղաքական կյանքն ունի իր առանձնահատկությունները՝ ա) մեզ մոտ այն ձեւավորվեց անհերեւակայելի բարդ «արցախյան կծիկի» պայմաններում, ուստի եւ անցավ դժվարին փորձություններ, բ) այն զերծ է քաղաքական անոմալիաներից, որոնք կարող էին հանգեցնել ազգայնամոլական բնույթի հոսանքների առաջացման:

Այն մասամբ բացատրվում է նաեւ ավանդական լիբերալ-դեմոկրատական մտածելակերպի, իր ունեցածը շենացնելու եւ ուրիշին չթերագնահատելու ազգային հոգեբանությամբ:

Մեզանում գործող գրեթե բոլոր կուսակցությունների ու կազմակերպությունների ծրագրային փաստաթղթերի մեջ ամփոփված են դեմոկրատական այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են անձի իրավունքի հարգումը, ազգերի ինքնորոշման իրավունքի անվերապահ ընդունումը, սեփական ժողովրդի ճակատագրով մտահոգվելը, այլ ժողովուրդների հետ իրավահավասար սկզբունքներով համագործակցելը եւ այլն:

Հայ հասարակական-քաղաքական միտքը այդ դեմոկրատական սկզբունքներով է առաջնորդվել դեռեւս անցյալ դարավերջին, դրանք են ընկած նաեւ ռամկավարական գաղափարախոսության հիմքում: *«Արմենական կազմակերպության նպատակն է,*- ասված է, Ռամկավար ազատական կուսակցությունը ծնող բեւեռից մեկի՝ արմենականների ծրագրում,- *յեղափոխությամբ Թուրքիայի հայ ժողովուրդների համար իրաւունք ձեռք բերել ինքզինքի ազատօրէն կառավարելու, որով միայն կարող կը լինի իրեւ մարդ աշխատելու միջոցներ գտնել եւ զանոնք գործադրել ժամանակի պահանջմանց նկատմամբ»:*

Դեմոկրատական ծրագրային այս միտքը, նորից ամբողջ ձայնով հնչեց ավելի քան 100 տարի անց՝ 1988 թվականին, արդեն Ադրբեջանում արցախահայության ազատագրման, ինքնակառավարվելուն՝ ինքնորոշմանն ուղղված շարժման օրերին, դրվեց նրա հիմքում:

Որդեգրելով օրենքի առջեւ մարդկանց հավասարության, նրանց անձի եւ քաղաքական ազատությունների ապահովման, խմբակային եւ կառավարական ոտնձգություններից պաշտպանելու ռամկավարական սկզբունքները՝ Հայաստանի ռամկավար ազատական կուսակցությունը կարող է եւ պարտավոր է քաղաքական նոր պայմաններում լիարժեք բարմացնել դեմոկրատական միտքը Հայաստանում: Այդ սկզբունքների կենսագործումը հնարավոր կդառնա միայն լրիվ ինքնուրույնության եւ ազատ Հայաստանի պայմաններում: Այդ է պատճառը, որ ՀՌԱԿ-ը մի շարք կուսակցությունների հետ համատեղ հանդես եկավ Հայաստանի անկախության օգտին արված հայտարարությամբ: ՀՌԱԿ-ի ազգային եւ համամարդկային շահերը արտահայտող սկզբունքները նրան մեծ հնարավորություն են տալիս համագործակցելու հանրապետության քաղաքական կազմակերպություններից ու կուսակցություններից շատերի հետ: Այս հանգամանքը կարող է նպաստել հանրապետության քաղաքական կյանքի կայունացմանը եւ ժողովրդավարական գործընթացի հետագա խորացմանը:

Այդ առումով հատկանշական է նրա դավանած համոզմունքը, ըստ որի հայ ժողովրդի անկախությանն ու անվտանգությանը ուղղված ջանքերի իրականացումը նա տեսնում է դասակարգային խտրությունից զերծ, բոլոր խավերի ընդհանուր ճիգերի լարումով հայ իրեւ Հայաստանի առջեւ կանգնած խնդիրների լուծման կարեւորագույն նախադայման՝ Ռամկավար ազատական կուսակցությունը մեծ տեղ է հատկացնում կուսակցությունների միջեւ կազմակերպվող քաղաքական խորհրդակցություններին, ֆորումներին եւ «կլոր սեղաններին», դրանք դիտում որպես քաղաքական համագործակցության սկիզբ: Ռամկավարական լիբերալ-դեմոկրատական հայացքներին հավասարապես խորթ են ինչպես առճակատումը, այնպես էլ հարմարվողականությունը: Այս կամ այն կուսակցության կամ իշխանությունների գործելակերպի նկատմամբ դրսեւորած նրա քննադատական դիրքորոշումը ամենեւին էլ առճակատում չի նշանակում, այլ իր որդեգրած աշխարհայացքային՝ «ժողովրդի կամքի գերիշխանության» դեմոկրատական սկզբունքի խախտման փորձի քննադատությունն է:

Ռամկավարական լիբերալ-դեմոկրատական հայացքները ընկած են նաեւ ՀՌԱԿ-ի տնտեսական քաղաքականության սկզբունքների հիմքում, ուր ելակետ է համարվում մասնավոր սեփականությունը եւ այդ հիմքի վրա ազատ ձեռներեցությունն ու մրցակցությունը: Կուսակցությունը Հայաստանի քաղաքական հաջողությունների հիմքում իրավացիորեն դնում է տնտեսական գործոնը, ու որպեսզի վերջինս արդյունք տա, հաշվարկում է աշխատավոր մարդու շահերն արտահայտող պետական կարգավորման դերը: Այստեղից հետեւ է նկատել, որ ՀՌԱԿ-ը քաղաքական իր գործունեության հիմքում դրել է առանց բացառության՝ բոլոր քաղաքական կուսակցությունների, կազմակերպությունների ու հոսանքների հետ համագործակցությունը, եթե այն կկրի շինիչ եւ ազգանպաստ բնույթ:

Ազգային համաձայնությունը ընդունելով իրեւ Հայաստանի առջեւ կանգնած խնդիրների լուծման կարեւորագույն նախադայման՝ Ռամկավար ազատական կուսակցությունը մեծ տեղ է հատկացնում կուսակցությունների միջեւ կազմակերպվող քաղաքական խորհրդակցություններին, ֆորումներին եւ «կլոր սեղաններին», դրանք դիտում որպես քաղաքական համագործակցության սկիզբ: Ռամկավարական լիբերալ-դեմոկրատական հայացքներին հավասարապես խորթ են ինչպես առճակատումը, այնպես էլ հարմարվողականությունը: Այս կամ այն կուսակցության կամ իշխանությունների գործելակերպի նկատմամբ դրսեւորած նրա քննադատական դիրքորոշումը ամենեւին էլ առճակատում չի նշանակում, այլ իր որդեգրած աշխարհայացքային՝ «ժողովրդի կամքի գերիշխանության» դեմոկրատական սկզբունքի խախտման փորձի քննադատությունն է:

Ռամկավարական լիբերալ-դեմոկրատական հայացքները ընկած են նաեւ ՀՌԱԿ-ի տնտեսական քաղաքականության սկզբունքների հիմքում, ուր ելակետ է համարվում մասնավոր սեփականությունը եւ այդ հիմքի վրա ազատ ձեռներեցությունն ու մրցակցությունը: Կուսակցությունը Հայաստանի քաղաքական հաջողությունների հիմքում իրավացիորեն դնում է տնտեսական գործոնը, ու որպեսզի վերջինս արդյունք տա, հաշվարկում է աշխատավոր մարդու շահերն արտահայտող պետական կարգավորման դերը:

Ազգային համաձայնությունը ընդունելով կան օրենքների ընդունումը եւ արհմիությունների գործունեությունը, իրեւ տնտեսական մենաշնորհները հակակշռելու գլխավոր միջոց:

Քաղաքական եւ տնտեսական կյանքի նկատմամբ ունեցած հայացքները կուսակցությանը հեռու են պահում ծայրահեղականությունից եւ իշխանատենչ ձգտումներից, նրա գործունեությունը հիմնվում է ազգային շահերի, ինքնորոշման եւ հանրապետության ամրապնդման գաղափարների վրա: Ռամկավարները ունեցել են ինքնուրույն դիրքորոշում Ղարաբաղյան շարժման, Հայաստանի անկախության, ինքնիշխանության, ինքնորոշման, ինքնակառավարման, ինքնապաշտպանության, ինքնաբավության, ինքնաֆինանսավորման, ինքնաբնակեցման, ինքնաբնակչության, ինքնաբնակարանաշինության, ինքնաբնակարանավարության, ինքնաբնակարանավարության, ինքնաբնակարանավար

Հեղինակը վերլուծում է Ծոցի ճգնաժամի մեջ ներքաշված հաղթող եւ պարտվող կողմերի ուժերի հաշվեկշիռը ճգնաժամից առաջ եւ հետո, վեր հանում նոր իրավիճակը, տարածաշրջանի երկրների շահերը, միաժամանակ չանդրադառնալով մի կարեւոր հանգամանքի՝ իրական հարցին: Հուսով ենք, որ հետագայում առանձին հոդվածով այդ բացը կլրացվի:

Ս եծից մինչեւ ծիծաղելին մի քայլ է միայն: Նաղոլեոնի շուրթերով ասված այս ճշմարտությունը կրկին հաստատվեց Սադդամ Հուսեյնի արկածախնդրությամբ, որ նա ձեռնարկեց 1990 թ. օգոստոսի 2-ին, երբ իրաքյան զորքերը կայծակնային արագությամբ գրավեցին Քուվեյթը եւ այն հայտարարեցին Իրաքի 19-րդ նահանգը:

Քուվեյթ ներխուժելու նախօրյակին Իրաքիան, Իրաքին հետ շրջեց եւ ժամանակավորապես դուրս մղեց արաբական աշխարհի ղեկավարության համար պայքարից: Դրան համաձայնասխան՝ բարձրացավ Եգիպտոսի, Սիրիայի եւ Սաուդյան Արաբիայի դերը, որը վկայում է արաբական աշխարհում ստեղծված նոր հաշվեկշռի բաղկացուցիչ մասը:

Իրաք-Քուվեյթյան պատերազմի երկրորդ ծառայեց Իսրայելի դիրքերի հետագա ամրապնդմանը, եւ նա դրան հասավ առանց մի փամփուշտ իսկ արձակելու: Իսրայելի դեկանների մեծ մասը դասաղարտեց ՊԱԿ-ի բաղաքականությունը: Պաղեստինցիները զրկվեցին նրանց օգնությունից, այսօր ՊԱԿ-ը չի գրավում այն պատվավոր տեղը եւ չունի այն կշիռը, որ նա ուներ մինչեւ իրաք-քուվեյթյան պատերազմը: Պաղեստինցիների դիրքերի թուլացումը կազմ

Հարավսլավիա. արյունոտ անորոշություն

Հարավսլավական հարցի միջազգայնացումն ընթացքի մեջ է. այդ է ապացուցում եւրոպական նոր առաքելությունը: Սակայն դեռեւս ամեն ինչ կախված է ներքին դերակատարներից:

Այս օրաթերթը, ինչպես նախորդները, Հարավսլավիայում ավարտվեց անորոշության եւ արյան մեջ: Զորեքշաբթի լույս հինգշաբթի գիշերը երկրի կոլեկտիվ նախագահությունը զինադադարի ծրագիր առաջարկեց Խորվաթիայում, ուր սերբ փոքրամասնության զինված ուժերը, համառ ճակատամարտերից հետո, իրենց ձեռքն են վերցրել Բանիայի երջանը: Սակայն, այս ծրագիրը պետք է դեռեւս սպասա խորվաթական իշխանությունների համաձայնությունը, որպեսզի դրա կիրառության բոլոր ձեւերը մանրամասնորեն կարողանան հաստատվել:

Դրանից հետո միայն Եւրոպական ընկերակցության բարի ծառայությունների առաքելությունը կարող է ձեւավորվել: Զորեքշաբթի օրվանից ի վեր Փարիզում Հոլանդիայի դեսպան Վիյենդոը, որ միաժամանակ Եւրոպական ընկերակցության բարձրաստիճան ներկայացուցիչն է Հարավսլավիայում, բազմապատկում է իր ջանքերը Բելգրադում եւրոպական «տոյկայի» չորրորդ այցը նախապատրաստելու համար (Լյուքսեմբուրգի, Հոլանդիայի եւ Պորտուգալիայի արտգործնախարարներ), որ նախատեսվում է ուրբաթ օրը:



Եւրոպացիները ցանկանում են իրենց առաքելությանը նոր մանդատ առաջարկել Հարավսլավիայում: Այն չի սահմանափակվի Սլովենիայով, այլ կընդարձակվի Խորվաթիայի վրա, որ այսօր ժգնաժամի ամենասուր գոտին է: Այնտեղ զինադադարի կիրառումը հսկող դիտորդների քանակն անցնում է հարյուրից: Եւրոպական ընկերակցության ներկայացուցիչներին այս գործի մեջ պետք է օգնեն հարավսլավական բանակի եւ խորվաթական ոստիկանության տարբերից կազմված խառը պարեկները:

Ակնհայտորեն ամենաբարդը այս կեցի վրա է եւրոպական ծրագիրը հանդիպում (եւ կհանդիպի) դժվարությունների: Քանզի, մի կողմից, խորվաթները բացահայտորեն մեղադրում են բանակին սերբ փոքրամասնությանն աջակցելու մեջ, մյուս կողմից՝ Կրայինայի երջանի սերբերը չեն համաձայնվում առանց հատուկ մանդատի բացել իրենց տարածքը Զինչը նրանք հայտարարել են անկախ Խորվաթիայից, երբ սա հռչակել էր իր լիիրավ ինքնությունը՝ ստուգումների համար:

Սակայն, հակառակ այս խոչընդոտների, հարավսլավական հարցի միջազգայնացման միտումը, թվում է, ամրանում է: Զորեքշաբթի օրը Մոսկվայում Ջորջ Բուշն ու Միխայիլ Գորբաչովը զինադադարի կոչ արեցին, որ ավելի ուժեղացնում է, թե իրենց երկրները անտարբեր եւ բացակա չեն մնա այդ ճգնաժամում: Դրա հաջորդ օրը Վաշինգտոնը նույնպես հայտարարեց, թե առաքելություն է ուղարկել Հարավսլավիա:

Բոլոր դեպքերում, երկրում ոմանք արդեն նախապատրաստվում են այդ միջազգայնացմանը: Այսպես, *«Բորբա»* օրաթերթը հրապարակել է Խորվաթիայի ներքին գործերի նախարարի «գաղտնի նոտան», ուր հուշվում են այն «անմիջական պատասխանները», որ խորվաթ բնակչությունը պետք է տա եւրոպացի դիտորդներին: Ըստ այս ցուցումների, նախ պետք է ժխտել սերբ-խորվաթական ազգամիջյան բախումը եւ խոսել միայն խորվաթական օրինական իշխանության վրա հարձակումների մասին, այնուհետեւ պետք է տարբերակել Խորվաթիայի սերբ համայնքը զինյալներից, որոնք լոկ *«Սերբիայի եւ հարավսլավական բանակի կողմից աջակցվող ահաբեկիչներ են»*, *«խորվաթական տարածքները»* խլելու կոչված: Մի խոսքով, եւրոպական դիտորդները պետք է «ժողովրդի» երթերից լսեն այն, ինչ Զագրեբը կրկնում է ամիսներ ի վեր:

Սակայն, եթե Զագրեբը նախապատրաստվում էլ է եզրնաղադարի, հինգշաբթի օրը նա խոսում էր իր պաշտպանունակությունը մեծացնելու մասին: Նախագահ Ֆրանյո Տուջմանը Խորհրդարանի առաջ նույնիսկ պահանջում էր խորվաթական ուժերից «հարձակողական դիրք գրավել», սակայն միեւնույն ժամանակ ճշտում, որ ինքը հրաժարվել է Սերբիայի եւ հարավսլավական բանակի դեմ համընդհանուր պատերազմի գաղափարից: Եւ եթե վերջիններիս դեռեւս ընդունում է սերբ փոքրամասնությանը պաշտպանելու մեջ, իր զորքերին հրահանգ է տալիս չդիտարձակվել այլեւս բանակի վրա, նրան միտուկ ուժերի հրամանատարն է: Վարժված ԱՄՆ-ի Հարավային Ամերիկայի, ուր նա կռվել է, պարտիզանական պայքարի ձեւերին, արտասահմանցի այս սերբին Զագրեբի քարոզչությունը վարձկան զինվոր է ներկայացնում: Դրագանը մի քանի ամիս ի վեր ուղղակի հարձակումներ է կազմակերպում Արեւմտյան Խորվաթիայում, մասնավորապես Զադարին եւ Սպլիտին մերձակա ծովափնյա գյուղերի դեմ: Այս մարտերը, ինչպես նաեւ Զագրեբից հարավ կամ Խորվաթիայի արեւելյան մասում՝ Սերբիայի հետ սահմանային երջանի մոտ մահացու բախումները,- հնարավոր չէ բոլորը հաշվառել,- ընթանում են խորվաթական կողմի համար ծանր կորուստների գնով:

Անցյալ շաբաթ «Բորբա» օրաթերթը հայտնում էր հարյուր ուրսուն սպանվածի մասին միայն վերջին օրերի ընթացքում: Սիսակի հոսպիտալում բժիշկ Ստանիսլավ Մուգիչի խումբը մի գիշերվա մեջ տասնմեկ վիրահատություն կատարեց: Շատ վերքեր ծանր չէին լինի, եթե փամփուշտները սղոցված չլինեին: *«Վնասվածքները ահավոր են հյուսվածքների ներսում»*, ասում են բժիշկները:

Վնասվածքները ահավոր են նաեւ գյուղերում: Մեկ եւ մյուս կողմից քարոզչությունը ավերածություններ է անում: Երեքշաբթի լույս չորեքշաբթի գիշերը, ընդամենը ժամի, Նովո Սելոյում ճակատային գծի վրա խորվաթական ռադիոն հայտնում էր գյուղի վրա սերբ պարտիզանների ականանետային հարձակումների մասին: Սակայն հայտարարության ժամանակ այնտեղ ամեն ինչ խաղաղ էր: Փոխարենը, երեք քառորդ ժամ անց, մոտ քսան արկ պայթեցին ավանի վրա, ուղեկցվելով ավտոմատային կրակահերթերով: Հայտարարությունը կեղծ չէր, այլ պարզապես վաղաժամ: Եւ ոչ ոք չէր կարող ասել, թե իրականում որ ժամքարն է կրակ բացել:

Այս պատերազմին հետեւում է գրեթե նույնչափ ավերիչ մի այլ՝ աղաղեղեկատվության պատերազմը: Յուրաքանչյուր արյունոտ դեպքից հետո մեջտեղ են նետվում ծայրահեղ հակադիր տարբերակներ ինչպես իրադարձությունների ընթացքի, այնպես էլ մարդկանց թվի վերաբերյալ: Եւ ամեն անգամ, թվում է, իսկությունը հնարավոր չէ պարզել: Մի քանի օր առաջ Զագրեբը հայտարարում էր սերբական ուժերի կողմից Ստրուգայում կատարված վայրագությունների մասին, ինչը վերջիններս ժխտեցին անմիջապես, որակելով այն սարքովի: Հինգշաբթի օրը, երբ զինադադար էր հայտարարված, բանակը միջամտեց Դալյում (Արեւելյան Խորվաթիա)՝ բաժանելու համար խորվաթ եւ սերբ մարտիկներին, եւ անմիջապես խորվաթական ոստիկանության կողմից մեղադրվեց իրենց հակառակորդներին օգնության հասնելու համար:

Այսպես, Հարավսլավիայում անորոշությունը պատել է ոչ միայն աղագան, այլեւ ներկան:

Կոստա ԽՐԻՍՏՈՖ
«Լը Մոնդ», 9 օգոստոս 1991

Ահաբեկչության նոր ալիք.

Սալման Ռուշդին հետապնդվում է

Ի նչպես արդեն նշել ենք թերթի հուլիսի 17-ի համարում, Սալման Ռուշդիի «Սատանայական բանաստեղծություններ» գրքի իտալերեն լեզվով թարգմանության հեղինակ Կաթրիելլոն վերջերս իր բնակարանում մահափորձի ենթարկվեց, սակայն դանակահարողին, որը ներկայացել էր որպես Իտալիայում Իրանի իսլամական հանրապետության դեսպանատան աշխատակից, չհաջողվեց իրականացնել իր մտադրությունը: Մյուս ահաբեկիչը, որ հանձն էր առել նույն գրքի ճապոներեն թարգմանության հեղինակ Հիտաշի Իգարաշիի սպանությունը, ավելի հրմուս մարդասպան էր. նրան հաջողվեց իրականացնել մահափորձը: Եթե դրանց ավելացնենք նաեւ օգոստոսի 8-ին Փարիզի արվարձաններից մեկում տեղի ունեցած ահաբեկչությունը, որին զոհ դարձավ Իրանի նախկին վարչապետ Շահփուր Բախթիարը, եւ Իրանի վարչակարգի մոլի հակառակորդներ կարող է վտանգի ենթարկել Ռուշդիի կյանքը»:

Սեպտեմբերին, Լոնդոնի եւ Թեհրանի հարաբերությունների վերսկսումից հետո, Իրանի իսլամական հանրապետությունը պարտավորվեց հարգել միջազգային օրենքները եւ չմիջամտել Անգլիայի ներքին գործերին: Այդ խոստումներն անգլիական պատասխանատուների կողմից մեկնաբանվեցին այնպես, որ Իրանը պարտավորվում է չխրախուսել դատավճռի կատարումը, անգամ թույլ չտալ դրա իրագործումը: Սակայն այս տարվա ուխտագնացության ժամանակ տեղի ունեցած ավանդական *«բարաթ ազ մոշերին»* («բողություն հերետիկոսաց») անվանվող ցույցերում կոչ արվեց իրականացնել Իմամ Խոմեյնիի ֆեթվան: Կոչից երկու շաբաթ հետո Իտալիայում հավատարմագրված Իրանի իսլամական հանրապետության դեսպանատան անունից մի անհայտ անձ մուտք է գործում 65-ամյա թատերագիր Կաթրիելլոյի բնակարանը Միլանում եւ խնդրում դեսպանատան համար ինչ-որ տեքստ թարգմանել: Ահաբեկիչը փորձում է Ռուշդիի մասին տեղեկություններ իմանալ Կաթրիելլոյից, սակայն գրողը պատասխանում է, թե անձամբ չի ճանաչում Ռուշդիին, եւ պահանջում է իրանցուց բողնել բնակարանը: Այդ պահին ահաբեկիչը գրպանից դանակ է հանում եւ նախքան փախուստի դիմելը հարվածում իտալացի գրողի բազկին եւ կրծքին: *«Լա ռեպուբլիկա»* թերթին տված հարցազրույցի ժամանակ Կաթրիելլոն հայտնել է. *«Մինչեւ մահափորձի դիմելը ահաբեկիչը մի քանի անգամ զանգահարել է: Իտալերեն խոսում էր առողջանությամբ: Առաջարկում էր թարգմանել ինչ-որ մուսուլման իրանցու մի գիրք: Մի անգամ էլ դեսպանատան անունից ինձ Իրան էր հրավիրել»:*

Իտալիայի սոցիալականությունը, ի նկատի ունենալով Իրանի հետ հարաբերությունների բոլոր նրբությունները, Կաթրիելլոյին զգուշացրեց ավելի մանրամասն տեղեկություններ չհաղորդել լրատվական միջոցներին: Այդ միջադեպից հետո Իրանի դեսպանատունը հերքեց այն լուրը, թե իբր դանակահարողը եղել է դեսպանատան աշխատակիցը:

Մի քանի օր անց ահաբեկչության զոհ դարձավ Սալման Ռուշդիի գրքի ճապոներեն թարգմանության հեղինակը: Հուլիսի 12-ին Տոկիոյի արվարձաններից մեկում, Ցուկաբայի համալսարանի մոտակայքում գտնվող գրասենյակից ոչ հեռու, վերելակի դիմաց դանակի 6 հարվածներից սպանվեց նույն համալսարանի դասախոս 44-ամյա Հիտաշի Իգարաշին: Նա իտալական *«Ջանի Պալմա»* հրատարակչության պատվերով թարգմանել էր *«Սատանայական բանաստեղծություններ»* գիրքը: 1990-ին կայացած հարցազրույցի ժամանակ Հիտաշի Իգարաշին ասել էր, թե Ռուշդիի գիրքը գեղարվեստական մեծ արժեք է ներկայացնում: Իգարաշին 1976-ին Իրանի շահի հրավերով բազավորական միությունում փիլիսոփայություն դասավանդելու համար Թեհրան էր մեկնել: Իգարաշիի մահվան կապակցությամբ հրապարակված ցավակցական խոսքում Ռուշդին կոչ արեց Թեհրանի իսլամական վարչակարգին՝ իր հեղինակած գրքի հրատարակման հետ որեւէ առընչություն ունեցող անձանց նկատմամբ մահապատժի վճիռը չեղյալ համարելու հորդորով: Ռուշդին իր խոսքն ուղղեց նաեւ Անգլիայի, Իտալիայի եւ Ճապոնիայի կառավարություններին, ինչպես նաեւ մահմեդական եւ ոչ մահմեդական հանրությանը՝ դիմել Իրանի իսլամական հանրապետությանը՝ Իմամ Խոմեյնիի դատավճիռը չեղյալ համարելու խնդրանքով:

Սիրուս Էլահիի եւ Բուրմանդիի սպանությունները, որոնք նույնպես տեղի ունեցան դանակահարության միջոցով, ապա դժվար չէ այդ բոլոր սպանությունների եւ մահափորձերի միջեւ գտնել ընդհանուր եզրեր: Այսպիսով, 1988 թվականից ի վեր՝ «Սատանայական բանաստեղծություններ» գրքի հրապարակումից հետո կրոնական մոլեռանդության զոհ դարձած մարդկանց թիվը հասավ 21 հոգու:

Ըստ Լոնդոնում հրատարակվող «Ջեյհան» շաբաթաթերթի, Սալման Ռուշդիի նկատմամբ ահաբեկչության նոր ալիքն սկիզբ է առնում անցյալ տարվա փետրվար ամսից: Ձեզ ենք ներկայացնում «Ջեյհանում» տպագրված նյութի համառոտ թարգմանությունը:

1990 թ. փետրվարին անգլիական հետախուզությունը տեղեկացրեց, որ Իրանի իսլամական հանրապետությունը, հակառակ իր խոստումներին, ահաբեկիչների մի խումբ է ուղարկել Անգլիա՝ Սալման Ռուշդիին սպանելու: Անգլիական հետախուզությունն այդ մասին զգուշացրեց Սալման Ռուշդիին եւ նրա հսկողությունն իրականացնող ոստիկանությանը: Անգլիական հետախուզությունը հայտնեց նաեւ, որ մի խումբ անհայտ անձինք Ռուշդիին սպանելու դիտավորությամբ արտերկրում դիմել են իսլամական հանրապետության ներկայացուցիչներին: Սակայն, հետախուզությանը հայտնի չէր խմբի Անգլիայում գտնվելու մասին որեւէ փաստ: Այս պահից էլ հայտնի դարձավ, որ Սալման Ռուշդիին սպառնացող վտանգը դեռեւս չի վերացել եւ *«Սատանայական բանաստեղծություններ»* գրքի հեղինակը նորից ընդհատակ անցավ: Այնուամենայնիվ, Լոնդոնի եւ Թեհրանի միջեւ հարաբերությունների վերսկսումից ի վեր Ռուշդին փոքր-ինչ ազատ շունչ էր քաշում:

Միջազգային լրատվական գործակալությունները վերջերս տեղեկացրին, որ մի խումբ ահաբեկիչների գործողությունից բացի, իսլամական հանրապետությունը մի քանի ամիս առաջ վերահաստատել է Իմամ Խոմեյնիի կողմից 1989 թվականին հրապարակված անգլիացի գրողի մահապատժի ֆեթվան: Մարտ ամսին Ռուշդիին սպանելու համար նախատեսված պարգեւատրման գումարը նույնիսկ կրկնապատկվեց եւ հասցվեց 2 միլիոն դոլարի: Այդ լուրերի հրապարակումից հետո Ռուշդիի կողմնակիցները Անգլիայում սկսեցին անհանգստանալ այն բանի համար, որ Լոնդոնը Թեհրանի հետ իր տնտեսական հարաբերությունները բարելավելու դիմաց պատրաստ է զոհաբերելու Ռուշդիին: Սալման Ռուշդիի պաշտպանության միջազգային կոմիտեի նախագահ տկն. Ֆրանսիս դե Սուզան հայտարարեց. *«Ռուշդիի հարցի անտեսումն անգլիական կառավարության կողմից անընդունելի փաստ է: Չարձագանքելով Ռուշդիին ուղղված սպառնալիքներին, որի ապացույցն է երկու երկրների միջեւ հարաբերությունների խորացումը, Անգլիան փաստորեն ներում է շնորհում ահաբեկչությանը»:* Տկն. դե Սուզան եւ անգլիացի ականավոր գրողներ Հարոլդ Փենիքրը, Ռոնալդ Հարվուդը եւ լեդի Անտոնիա Ֆրիզերը անգլիական կառավարությունից Ռուշդիի հարցում երաշխիքներ ստանալու նպատակով մայիս ամսին հանդիպում ունեցան արտգործնախարար Դագլաս Հըրդի հետ: Արտգործնախարարը Ռուշդիի հովանավորներին փորձեց հասկացնել, որ հարցի գործուն հետապնդումը Թեհրանում կբուլացնի իրատեսական քեւի ուժը, որը կարող է ճակատագրական լինել Ռուշդիի համար: Այդ հանդիպումից հետո տկն. դե Սուզան հայտարարեց. *«Անգլիական կառավարության տեսակետով, դատավճռի բուռն քննարկումը կարող է վտանգի ենթարկել Ռուշդիի կյանքը»:*

Սեպտեմբերին, Լոնդոնի եւ Թեհրանի հարաբերությունների վերսկսումից հետո, Իրանի իսլամական հանրապետությունը պարտավորվեց հարգել միջազգային օրենքները եւ չմիջամտել Անգլիայի ներքին գործերին: Այդ խոստումներն անգլիական պատասխանատուներն անգլիական կողմից մեկնաբանվեցին այնպես, որ Իրանը պարտավորվում է չխրախուսել դատավճռի կատարումը, անգամ թույլ չտալ դրա իրագործումը: Սակայն այս տարվա ուխտագնացության ժամանակ տեղի ունեցած ավանդական *«բարաթ ազ մոշերին»* («բողություն հերետիկոսաց») անվանվող ցույցերում կոչ արվեց իրականացնել Իմամ Խոմեյնիի ֆեթվան: Կոչից երկու շաբաթ հետո Իտալիայում հավատարմագրված Իրանի իսլամական հանրապետության դեսպանատան անունից մի անհայտ անձ մուտք է գործում 65-ամյա թատերագիր Կաթրիելլոյի բնակարան՝ Միլանում եւ խնդրում դեսպանատան համար ինչ-որ տեքստ թարգմանել: Ահաբեկիչը փորձում է Ռուշդիի մասին տեղեկություններ իմանալ Կաթրիելլոյից, սակայն գրողը պատասխանում է, թե անձամբ չի ճանաչում Ռուշդիին, եւ պահանջում է իրանցուց բողնել բնակարանը: Այդ պահին ահաբեկիչը գրպանից դանակ է հանում եւ նախքան փախուստի դիմելը հարվածում իտալացի գրողի բազկին եւ կրծքին: *«Լա ռեպուբլիկա»* թերթին տված հարցազրույցի ժամանակ Կաթրիելլոն հայտնել է. *«Մինչեւ մահափորձի դիմելը ահաբեկիչը մի քանի անգամ զանգահարել է: Իտալերեն խոսում էր առողջանությամբ: Առաջարկում էր թարգմանել ինչ-որ մուսուլման իրանցու մի գիրք: Մի անգամ էլ դեսպանատան անունից ինձ Իրան էր հրավիրել»:*

Իտալիայի սոցիալականությունը, ի նկատի ունենալով Իրանի հետ հարաբերությունների բոլոր նրբությունները, Կաթրիելլոյին զգուշացրեց ավելի մանրամասն տեղեկություններ չհաղորդել լրատվական միջոցներին: Այդ միջադեպից հետո Իրանի դեսպանատունը հերքեց այն լուրը, թե իբր դանակահարողը եղել է դեսպանատան աշխատակիցը:

Մի քանի օր անց ահաբեկչության զոհ դարձավ Սալման Ռուշդիի գրքի ճապոներեն թարգմանության հեղինակը: Հուլիսի 12-ին Տոկիոյի արվարձաններից մեկում, Ցուկաբայի համալսարանի մոտակայքում գտնվող գրասենյակից ոչ հեռու, վերելակի դիմաց դանակի 6 հարվածներից սպանվեց նույն համալսարանի դասախոս 44-ամյա Հիտաշի Իգարաշին: Նա իտալական *«Ջանի Պալմա»* հրատարակչության պատվերով թարգմանել էր *«Սատանայական բանաստեղծություններ»* գիրքը: 1990-ին կայացած հարցազրույցի ժամանակ Հիտաշի Իգարաշին ասել էր, թե Ռուշդիի գիրքը գեղարվեստական մեծ արժեք է ներկայացնում: Իգարաշին 1976-ին Իրանի շահի հրավերով բազավորական միությունում փիլիսոփայություն դասավանդելու համար Թեհրան էր մեկնել: Իգարաշիի մահվան կապակցությամբ հրապարակված ցավակցական խոսքում Ռուշդին կոչ արեց Թեհրանի իսլամական վարչակարգին՝ իր հեղինակած գրքի հրատարակման հետ որեւէ առընչություն ունեցող անձանց նկատմամբ մահապատժի վճիռը չեղյալ համարելու հորդորով: Ռուշդին իր խոսքն ուղղեց նաեւ Անգլիայի, Իտալիայի եւ Ճապոնիայի կառավարություններին, ինչպես նաեւ մահմեդական եւ ոչ մահմեդական հանրությանը՝ դիմել Իրանի իսլամական հանրապետությանը՝ Իմամ Խոմեյնիի դատավճիռը չեղյալ համարելու խնդրանքով:

Գ.Ս.

digitised by A.R.A.R.@

Ճնշում Իսրայելի վրա

Միջազգային նոր կարգեր հաստատելու ճանապարհին Բուշն օգտվեց մոսկովյան գագաթաժողովից՝ ճնշում գործադրելու Իսրայելի վրա, դրան միացնելով մերձավորարեւելյան խաղաղության աղագա խորհրդաժողովի իր գործակից Գորբաչովին:

Երբ 1990 թ. օգոստոսի 10-ին Սադդամ Հուսեյնը հենց նոր գրաված Քուվեյթի ճակատագիրը կապեց Իսրայելի կողմից գրաված Պաղեստինի ճակատագրին, Երուսաղեմում վախից սառուցացին, թե Ասլանյանի ափից մինչեւ Պարսից ծոցը սփռված արաբները կհավաքվեն այն մարդու դրոշի տակ, որ Սալադինի օրինակով կնգցի վերանվաճել Երուսաղեմը:

Ջորջ Բուշի ուղղագիծ կեցվածքը, երկու հարցերը կապող օղակի մերժումը, եւրոպացիների կողմից սացված աջակցությունը, իրաքցի դիկտատորի ծայրահեղությունները, որ ստիպեցրին նույնիսկ նրանց, ովքեր հավանություն էին տալիս նրա ձեռնարկին, հանգստացրին Իսրայելին եւ նրան մղեցին օրինակելի տղայի կեցվածք ընդունել, երբ իր գլխին *սկաղներ* էին թափվում, ու ինքը չէր պատասխանում:

Սակայն, եթե կապող օղակը մերժվեց իրականում, այն մնաց գլուխներում: Ուստի, Ծոցի պատերազմից մեկ տարի հետո այս կոնֆլիկտի մեջ խորապես ոչինչ չի փոխվել, կոնֆլիկտ, որ 1948-ից ի վեր մերձավորարեւելյան բոլոր ճգնաժամերի հիմքում է ընկած: Իսկ իսրայելցիները, հավատարիմ մինչեւ այժմ իրենց հաջողված տակտիկային, ճգճգում եւ ժամանակ են շահում:

Միացյալ Նահանգների նախագահը չէր կարող իրեն թույլ տալ ավելի երկար սպասել, վախենալով, թե խորհրդաժողովի իր ծրագրերը կկորչեն 1992 թ. ամերիկյան եւ իսրայելական ընտրությունների բոհուքոհում: Նա չէր կարող երկար ժամանակ հիասթափեցնել արաբական աշխարհի եւ մնացյալ իր դաշնակիցներին, ովքեր հույս էին դնում Ծոցի պատերազմից հետո, Վաշինգտոնում հայտարարված միջազգային նոր կարգի հեռանկարների վրա, մոռենալու համար այնքան սպասված խաղաղությանը: Ահա թե ինչու նա օգտվեց այդ միջազգային բացառիկ բեմից, որ հարդարվել էր Մոսկվայում կնքելու համար *Usurs* պայմանագիրը, ճնշում գործադրելու Իսրայելի վրա, մի բան, որ ամերիկյան հազվագյուտ տրեզիդենտներ էին մինչ այդ իրենց թույլ տվել, եւ իրեն միացնել մերձավորարեւելյան աղագա խորհրդաժողովի իր գործակից Միխայիլ Գորբաչովին:

Այստեղ, պատին դեմ տված,- ինչպես թե Իսրայելը միակն է, որ մերժում է հրավերը,- Իցհակ Շամիրը չէր կարող «այո» չասել արդեն վեցերորդ անգամ Երուսաղեմ ուղարկված Ջեյմս Բեյքերին: Սակայն այս «այո»ն, որ պետք է հաստատեր իսրայելյան կաբինետը, երկու Մեծերի կողմից ղեկավարվող խաղաղության խորհրդաժողովին Իսրայելի մասնակցության լոկ ձեւական համաձայնություն է: Քանզի կարեւոր մի խնդիր կա, որին, ինչպես փրկության օղակի, կառչում են իսրայելցիները. դա հորդանանա-պաղեստինյան պատվիրակության կազմավորումն է, որի անդամները, ըստ իսրայելցիների պահանջի, չպետք է նշանակվեն Պաղեստինի ազատագրության կազմակերպության կողմից, եւ ոչ մեկը չպետք է ներկայացնի Արեւելյան Երուսաղեմը:

Կրկնակի հատակ, կեղծ բնակավայր, կրկնակի ազգություն, վարպետ խորամանկություններ՝ այս բոլորը դեռեւս դուրս չեն եկել Ջեյմս Բեյքերի գլխարկից: Եւ նախքան խաղաղության համար հաղթանակ գոչելը, անհրաժեշտ է, որ ամերիկյան բանակցողը կարողանա կարգավորել հետեւյալ խնդիրը, որ թունավորում է առհասարակ բոլոր «կեղտոտ պատերազմների» ավարտը, լինի այն Աֆղանստան, Վիետնամ, Ալժիր, թե այսօրվա Մերձավոր Արեւելքը. որո՞նք են, արդ, «օրինական բանակցողները»:

«Լը Մոնդ», 9 օգոստոս 1991

Ժիրինովսկին նորորյա Հիտլե՞ր

Ռուսական լիբերալ-դեմոկրատը Էստոնիայում մատ է թափ տալիս անջատողականների վրա

Անցյալ շաբաթ, տեղական գործադուլային կոմիտեի եւ Ինտերշարժումի հրավերով մի քանի օրով Էստոնիա էր ժամանել ԽՍՀՄ լիբերալ-դեմոկրատական կուսակցության նախագահ Վ. Ժիրինովսկին: Ահա թե ինչ է գրում այդ կապակցությամբ Էստոնական «Ռահվա հասալ» թերթը «Ժիրինովսկի. նորորյա Հիտլե՞ր» վերնագրով հոդվածում: (10.08.91 թ.)

ԽՍՀՄ լիբերալ-դեմոկրատական կուսակցության նախագահ Վ. Ժիրինովսկին ներկայացավ որպես նախագահի աղագա թեկնածու: Այդ գործիչը ելույթներ ունեցավ միութենական ենթակայության գործարաններում:

- Լսելով նրան,- գրում է թերթը,- թվում է, թե կրկես ես ընկել կամ էլ էստրադային ներկայացում: Սակայն, իրականում դա ամենեւին էլ կատակ չէ: Նախքան Ռուսաստանի նախագահի ընտրությունները, նա անհայտ էր հասարակությանը: Բայց մի քանի շաբաթվա ուղեւորություններ եւ նախագահական ժողովները բավական էին, որ Ժիրինովսկու համար ծայն տան ավելի քան 6 մլն. ընտրողներ: Հարց է ծագում, թե ինչպիսի՞ն կլիներ արդյունքը, եթե պրոպագանդայի համար ժամանակը ավելին լիներ:

Որտեղի՞ց նման հաջողություն, ի՞նչ է նա առաջարկում:

Նա խփում է պարզունակությամբ. **«Ընտրեք ինձ նախագահ, եւ ձեր բոլոր հոգսերը կվերանան»:**

Ժիրինովսկին համոզված բացատրում է, թե հոկտեմբերին (Ռուսաստանում բոլոր շրջադարձային իրադարձությունները տեղի են ունեցել հոկտեմբերին) ժողովրդի համբերությունը կսպառվի: Գորբաչովի եւ այսպես ասած դեմոկրատների ժամանակը կանցնի: Գարնանն ավարտվում է վերակառուցում անվանված մղձավանջը: Իշխանության կգա լիբերալ-դեմոկրատների գլխավորությամբ կոալիցիան: Մի քանի ամսվա ընթացքում կընդունվի նոր հիմնական օրենք: Մեծ իշխանությամբ նախագահ կդառնա ինքը՝ Ժիրինովսկին, եւ գործերը վճռականորեն վեր կսլանան:

Բոլոր դժբախտությունները, Ժիրինովսկու կարծիքով, սկսվում են ազգային հարցին ոչ ճիշտ մոտեցումից: Սպագա նախագահն սպառնում է, որպես առաջին քայլ, ճնշել անջատողականությունը եւ անկախության ձգտումը: Եթե այլ կերպ հնարավոր չէ, ապա՝ զենքի ուժով: Ինքնուրույնության եւ ինքնիշխանության մասին խոսքը, Ժիրինովսկու կարծիքով, անհեթեթ ու ծիծաղելի է:

«Մեր պետության սահմանները չի կարելի փոփոխել, եւ եթե դա կարելի է անել, ապա՝ միայն ընդարձակման ուղղությամբ»:

Ժիրինովսկին գտնում է, որ խորհրդային Միությունն անհրաժեշտ է վերանվանել Ռուսաստան:

«Էստոնիայի, Լատվիայի եւ Լիտվայի փոխարեն մենք կստեղծենք մի մեծ, գեղեցիկ Բալթիական նահանգ, որտեղ առուալեզու բնակչությունն իրեն հանգիստ կզգա: Բայց ես դեմոկրատ եմ: Որպես իրավաբան, ես զբաղվել եմ մարդու իրավունքների հարցերով եւ հաստատում եմ, որ չկա ազգային դեմոկրատիա: Որտեղ սկսվում է նացիոնալիզմը, այնտեղ վերջանում է դեմոկրատիան: Էստոնիերին, լատիշներին, լիտվացիներին մենք չենք նեղացնի: Եթե ուզում են, թող խոսեն իրենց լեզվով, եթե ուզում են, թող մնան դպրոցները եւ մշակութային օջախները ինքնաֆինանսավորման սկզբունքի վրա: Սակայն ոչ մի անջատում»:

Ժիրինովսկին չխնայեց նաեւ մեր հյուսիսային հարեւաններին:

«Այստեղ մտածում են, թե մեզ մոտ կարգ հաստատելու համար կուղարկեն արեւմտյան զորքեր: Նման մտքով հանդես է եկել Ֆինլանդիայի վարչապետը: Այդ առիթով ես Ֆիննական հանրապետության ներկայացուցչին ասել եմ Մոսկվայում, որ նման հայտարարությունները վիրավորական են: Ես խորհուրդ տվեցի չխառնվել ռուսական գործերին, թե չէ նրանց էլ էժան չի նստի: Հիշենք, թե ինչպես Ֆինլանդիան ստացավ ինքնուրույնություն...»:

«Ես գիտեմ բոլոր պրոբլեմները: Հատկապես լավ եմ կողմնորոշվում ազգային հարցերում: Ես ծնվել եմ ազգային հանրապետությունում եւ շրջել ամբողջ ԽՍՀՄ-ը: Ես իրավաբան եմ: Ելցինի համար ավելի դժվար է: Նա մասնագիտությամբ շինարար է: Իսկ պետությունը տնտեսական կոմբինատ չէ: Գորբաչովի փորձը նույնպես միակողմանի է: Ամբողջ կյանքը կուսակցական կամ կոմերիտական աշխատանքում: Անընդհատ մի բաղթը դնում է մյուսի վրա, եւ իսկական կյանքի մասին ոչինչ չգիտի»:

Տնտեսության մեջ Ժիրինովսկին ավելի համեստորեն է գնահատում իր դերը, բայց միաժամանակ նրա ելակետային դիրքերը համապատասխանում են համաշխարհային ստանդարտներին. իշխանությունը չպետք է միջամտի, եւ բոլորը պետք է գտնվեն հավասար պայմաններում:

Ժիրինովսկու ելույթի ժամանակ նրա համախոհները գրքույկ էին վաճառում, լիբերալ-դեմոկրատական կուսակցության ծրագրով, նրա հիմնական դրույթով եւ այլ փաստաթղթեր: Խորհրդային լիբերալների դատողությունները թղթի վրա ավելի զուսպ էին, քան իրենց պարագլխի ծառում, գրում է թերթը:

Կուսակցությունն իրեն պատկերացնում է որպես կենտրոնական ուժ, որը մտադիր է իշխանության գալ ԽՍԿԿ գյուղացիական-դեմոկրատների ու կանայքների հետ կոալիցիայով: Բայց ինչպես ինքը՝ Ժիրինովսկին ասաց, ծրագիրը թղթի վրա ավելի թեթեւ է, քան նոր նախագահի գործունեությունը: Ծրագիրս շատ ուժգար է արտածել, թե Ժիրինովսկին, անջատողականության շարունակման դեպքում, կարող է արթնացնել ռուս ժողովրդի նացիոնալիզմը, ինչը կանխել այլեւս հնարավոր չի լինի: Երբ որեւէ ժողովուրդ շատ համառի, նա կոչնչացվի:

Ինչպե՞ս վերաբերվեցին Ժիրինովսկուն մարդիկ, որոնք նրան լսում էին Տալլինում: Պեգելմանի անվ. գործարանում ապագա նախագահին եկել էին նայելու կարծես թե ավելի շատ հետաքրքրասիրությունից դրդված: Սակայն տասը րոպեի ընթացքում հետաքրքիրը հմայեց հասարակությանը: Ճառը մի քանի անգամ ընդհատվեց բուռն ծափահարություններով: Ոչ էստոնալեզու բնակիչներին Ժիրինովսկին հայտարարեց. **«Դուք, կարծես թե առաջավոր գծում եք, եւ ավելի սուր եք զգում ազգային պրոբլեմը: Ռուսները էստոնիայում ստորացված են որպես երկրորդ կարգի մարդիկ: Ձեզ փորձում են այստեղից վտարել, բայց Ռուսաստանում ձեզ ոչ ոք չի սպասում: Այնտեղ նույնպես հերթ է: Դրա համար մի հանձնվեք: Պետք չէ վախենալ, թե այստեղ անկախություն կհռչակվի»:**

Ովքեր Ժիրինովսկուն համեմատում են Հիտլերի հետ,- գրում է թերթը,- գուցե թե չեն սխալվում: Չէ որ Հիտլերի ծառերը արտասանվում էին գարեջրատներում եւ սկզբում լրջորեն չէին ընդունվում: Հետո... արդեն ուշ էր:

Տալլին, Գայան ՍԱՐԳՍՅԱՆ
12 օգոստոս, 1991

ՄԱՐԶԱԿԱՆ

Կասպարովի հետ աշխարհի թագը 1993 թվականին էլ կվիճարկի Կարպովը

Այդ կարծիքին են ճատրակի մասնագետներից շատերը, որոնք Բրյուսելում սկսված աշխարհի առաջնության քառորդ եզրափակիչ մենամարտերի կապակցությամբ յուրենց գուշակություններն են անում: Նման դեպքերում սովորաբար ասում են. կարդանք կտեսնենք:

Համենայն դեպս, աշխարհի նախկին չեմպիոնի հնարավորություններն իրոք մեծ են: Պայքարը շարունակող գրոսմայստերներից Վիկտոր Կորչնոյը, Յան Թիմանը, Արթուր Յուսուպովը եւ Նայջել Շորթը Կարպովի համար, կարելի է ասել, անցած էտապ են:

Մնում է անակնկալներ ակնկալել քառորդ եզրափակիչ մտած ամենաերիտասարդ մասնակիցներից՝ լվովցի Վասիլի Իվանչուկից, մինսկցի Բորիս Գելֆանդից եւ հնդիկ Վիշվանաթան Անանդից:

Վերջինս ամենամեծ հանելուկն է աշխարհի առաջնության ներկա շրջափուլում:

Նրան ճանաչողներն ասում են, որ Անանդը ածում է ոչ թե օրերով, այլ ժամերով: Եւ իրոք, ճատրակի հայրենիքի տաղանդավոր ներկայացուցիչն ինքնատիպ, սուր-հարձակողական ոճ ունի: Շատ շուտով կբացահայտվի նրա արժեքների ռեալ գնահատականը. չէ՞ որ հիմա Անանդը մրցում է Կարպովի հետ: Ի դեմ նա, իրեն հատուկ հանդգնությամբ է ոսկսել մրցամարտն ամենաահեղ մրցակցի հետ: Ճիշտ է, առաջին երկու հանդիպումներն անավարտ են մնացել բարդ դիրքերում, սակայն երկրորդում Անանդը զինվորի առավելություն ունի եւ Կարպովը պետք է պայքարի ոչ-ոքի համար:

Սպասելիքները մեծ են Վասիլի Իվանչուկից եւ Բորիս Գելֆանդից: Երկուսն էլ տաղանդաշատ գրոսմայստերներ են: Սակայն աշխարհի թագի համար պայքարում տաղանդի եւ աշխատասիրության հետ անչափ կարեւոր է նաեւ ամուր նյարդեր ունենալը, իսկ դա բացահայտվում է միայն արտակարգ իրադրություններում: Համենայն դեպս, չնայած Յուսուպովի հետ մենամարտում Իվանչուկը ֆավորիտ է համարվում, սակայն առայժմ գիշում է 0,5:1,5 հաշվով: Իսկ ահա Գելֆանդը Շորթի հետ մրցամարտում առջեւում է 1:0 հաշվով: Երկրորդ պարտիան մնացել է անավարտ:

Թիմանը 1,5:0,5 հաշվով հաղթում է Կորչնոյին:

Քառորդ եզրափակիչ մենամարտերի համար նախատեսված է 8-ական պարտիա: Հավասար արդյունքի դեպքում հաղթողը կորոշվի կարճացված ժամանակով լրացուցիչ հանդիպումներում: ■

Համաշխարհային ֆուտբոլի աստղերը

Դրագան Ստոյկովիչ

Ստոյկովիչը շատ արագ դարձավ Ֆրանսիայի պատշգամբների թմբուկը

Ծնվել է 1965 թ. մարտի 3-ին, հասակը՝ 174 սմ, քաշը՝ 73 կգ: Խաղացել է Բելգրադի «Յուգոսլավիա» թիմում, իսկ անցյալ տարի հրավիրվել է Ֆրանսիայի «Մարսել» հանրահայտ ակումբը:

Դրագան Ստոյկովիչը համաշխարհային ֆուտբոլի ամենավառ աստղերից է: Աշխարհի իտալական առաջնությունում երկար եւ համբերատար ըստասում էին, թե երբ այս տաղանդավոր ֆուտբոլիստը զգացնել կտա իր մասին: Սակայն նախնական փուլում նրա խաղը ոչ մի կերպ չէր ընտացվում: Դա այն դեպքում, որ մեկնարկից առաջ շատերը Ստոյկովիչին պատկերացնում էին որպես աշխարհի առաջնության առաջիկա հերոսներից մեկը: Եթե իտալացի Սկիլաչին մեծամասնության համար հայտնություն էր, ապա Դրագան Ստոյկովիչը վաղուց հայտնի էր ֆուտբոլային լայն շրջանակներին: Ընդամենը 16 տարեկան էր, երբ առաջին անգամ հանդես եկավ «Յուգոսլավիա» հանրահայտ ակումբում: 18 տարեկանում Հարավսլավիայի հավաքականի լիարժեք անդամ էր: Իր երկրի առաջնությունում մասնակցել է 212 խաղի, խփել 91 գնդակ: 26-ամյա տաղանդավոր կիսապաշտպանը 2 անգամ հրավիրվել է աշխարհի խորհրդանշական հավաքականներ. 1988 թվականին՝ անգլիական լիգայի 100 ամյակի կապակցությամբ, իսկ 1989 թվականին՝ բրազիլիացի Ջիկոյի հրաժեշտի հանդիպմանը:

Ստոյկովիչի եւ Հարավսլավիայի հավաքականի մարզիչ Օսիմի միջեւ հարաբերությունները վաղուց սրված էին: Ինչպես ասում են, նրանց միջեւ բազմքցս սեւ կատու էր անցել: Օսիմը հաճախ կրկնում էր. «Ստոյկովիչը երբեմն միջին մակարդակի խաղ է ցուցադրում, իսկ նրա տաղանդը պարտավորեցնում է իրեն դրսեւորել յուրաքանչյուր խաղում»:

Երբ աշխարհի իտալական առաջնության առաջին 3 հանդիպումներում Ստոյկովիչը ոչնչով աչքի չընկավ, որին մինչ այդ «Մարսել»ը գնել էր 7 միլիոն դոլլարով, շատերը նույնիսկ տարակուսում էին, թե ինչի՞ համար ֆրանսիացի մեծահարուստ Բեռնար Տապին այդքան գումար քանում տվեց: Եւ ահա եկավ այն պահը, երբ Դրագանն ապացուցեց, թե ինչո՞ւ են իր արժեքները այդքան բարձր: Դա Իտալիայի հավաքականի հետ 1/8-րդ եզրափակիչ հանդիպումն էր, երբ Ստոյկովիչի երկու անվրեպ կակոցներն աշխարհի չեմպիոնի կոչման հավակնորդներից մեկի համար տուն վերադառնալու ազդանշան եղան: ■

ԽՍՀՄ առաջնություն

Պարդաուգավա - Կոտայք 0:0

«Կոտայք»ն անընդմեջ 7-րդ հանդիպումն է անցկացնում առանց պարտության:

Առաջին խումբ

Օգոստոսի 14-ի դրությամբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Ս
1. Ռուսաստան	24	13	7	4	29-12	33
2. Տիգրան	24	12	7	5	33-23	31
3. Ռոստ	24	11	9	4	38-24	31
4. Տավրիա	24	12	5	7	39-34	29
5. Բուկովինա	24	12	5	7	29-25	29
6. Լոկոմոտիվ	24	10	7	7	26-20	27
7. Դինամո Սուխ.	24	10	7	7	24-23	27
8. Տեքստիլշիկ	24	8	9	7	29-29	25
9. Ուրալմաշ	24	10	4	10	34-28	24
10. Նեֆթչիկ	23	10	4	9	29-29	24
11. Կովբոյտոր	23	9	6	8	25-22	24
12. Դինամո Մս.	24	8	7	9	31-27	23
13. Կայրաթ	24	9	4	11	22-25	22
14. Շինգիկ	24	9	4	11	30-37	22
15. Կոտայք	24	8	6	10	21-33	22
16. Ջիմբրուլ	24	6	10	8	26-27	22
17. Նեֆթչի	24	8	5	11	25-29	21
18. Ֆակել	24	8	5	11	21-29	21
19. Ջենիթ	24	5	10	9	18-20	20
20. Գեղոգ	24	5	9	10	20-29	19
21. Պարդաուգավա	24	5	5	14	17-27	15
22. Կուբան	24	4	7	13	20-34	15

Բաժինը վարում է Սուրեն ԲԱՐԴԱՍԱՐՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

Նազարբաեւը տնտեսական խորհրդակցության մասին

Ղազախսստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւը հայտարարեց, որ Վրաստանը, Հայաստանը, Լատվիան, Էստոնիան, Մոլդովան եւ միջինասիական հանրապետությունները համաձայնվել են առանց Կենտրոնի մասնակցության հանդիպել եւ քննարկել տնտեսական համագործակցության խնդիրները: Նազարբաեւը ելույթ ունեցավ Բիշքեկում, Կրգզստանի նախագահ Ասկար Ակաեւի հետ համատեղ մամուլի ասուլիսում, բանակցություններից հետո:

Նազարբաեւը «ԻԹ»-ի թղթակցին Ալմա-Աթայում միջհանրապետական հանդիպման իր առաջարկության առթիվ ասաց, թե այսօր *«հասունացել է այն պահը, երբ բոլոր հանրապետությունների ղեկավարները պետք է նստեն բանակցությունների սեղանի շուրջ, քանզի տնտեսական բոլոր կապերը քանդվում են, ժողովուրդը զրկվում է վաս պայմաններում, եւ ծավալվում է իսկական քաղաքացիական պատերազմը»:*

Ղազախսստանի նախագահն ասաց, որ հանդիպման ժամկետի մասին ինքը կարող է հայտնել միայն մյուս շաբաթվա մեջ:

Ա. Ակաեւը իր հերթին ավելացրեց, թե *«բոլոր հանրապետությունները շահագրգռված են հանդիպելու Ալմա-Աթայում, առանց Կենտրոնի մասնակցության»:*

«Նազարբաեւի այս նախաձեռնությունը ժամանակավրեպ է, քանզի վերջին երկու տարում նախկին միութենական հանրապետությունների միջեւ ոչ մի կարգին հանդիպում չի կայացել»,- ասաց Կրգզստանի նախագահը:

Մամուլի ասուլիսից հետո, հասարակայնության ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ Նազարբաեւը հատուկ ընդգծեց, որ անհրաժեշտ է շտապ ստորագրել Միութենական պայմանագիրը: *«Եթե մենք ուզում ենք կառուցել իսկական շուկա, տնտեսական լուրջ բարեփոխումներ անել, պետք է պահպանենք մեր մեծ պետությունը՝ Խորհրդային Միությունը»,-* ասաց նա:

Նազարբաեւը եւ Ակաեւը պայմագրեր փոխանակեցին, Ղազախսստանի եւ Կրգզստանի միջեւ բարեկամության եւ համագործակցության միջպետական պայմանագրի ստորագրման առթիվ:

«Դեմոկրատական Ռուսաստան»-ի հայտարարությունը

«Դեմոկրատական Ռուսաստան» շարժման համակարգիչ խորհրդի անդամներ Վիկտոր Շեյնիսը եւ Անատոլի Շարապը «ԻԹ»-ին հայտնեցին, թե Խորհուրդը իր նիստում չի ընդունել *«Երիտասարդ Ռուսաստան»* միության, սահմանադրական ժողովրդավարների կուսակցության եւ Ռուսաստանի Քրիստոնյա-ժողովրդավարական կուսակցության ՌԽՖՍՀ նախագահ Բորիս Ելցինին ուղղված դիմումի նախագիծը:

Վ. Շեյնիսը եւ Ա. Շարապը դատապարտեցին Միութենական նոր պայմանագիրը չստորագրելու դիմումի նախագծում պարունակվող փաստարկները, որոնք *«բացահայտ ազգայնամոլական բնույթ ունեն»:* Նրանք հայտնեցին, թե նիստում ընդունվել է Խորհրդի դիմումի վերջնական տեսքը՝ ուղղված նախագահ Բորիս Ելցինին: «Դեմոկրատական Ռուսաստանի» դիմումի մեջ նշված են այն պայմանները, որոնք թույլ կտան Ռուսաստանի կողմից Միութենական պայմանագրի ստորագրումը: Դրանք են.

– Միութենական պայմանագրի միաժամանակ ստորագրումը (կամ ստորագրելու հաստատ մտադրությունը) 4 հանրապետությունների՝ Բելոռուսիայի, Ղազախսստանի, Ռուսաստանի եւ Ուկրաինայի կողմից,

– պայմանագրից հանել այն կետերը, որոնք հակասում են ՌԽՖՍՀ ինքնիշխանության հռչակագրին, եւ այն մասը, որը թույլատրում է ոչ ժողովրդավարական ճանապարհով ընտրված ԽՍՀՄ ժողոգազամավորների համագումարին կամ ԽՍՀՄ Գերագույն խորհրդին ընդունել Միության նոր սահմանադրությունը,

– ԽՍՀՄ կազմից հանրապետության դուրս գալու կարգի որոշակիություն,

– պայմանագրում պետք է լինեն այնպիսի պայմաններ, որոնք թույլ չտան այն հանրապետության մուտքը Միություն, որ խախտվում են մարդու իրավունքները կամ իրականացվում է ցեղասպանություն եւ այլն:

«Դեմոկրատական Ռուսաստան» շարժման կարծիքով, Միութենական նոր պայմանագրի ստորագրումը ենթադրում է հնի գործունեության դադարեցում: ■

Ռուս-մոլդովական համաձայնագիր

Այդ տարածաշրջանները հեռացան Ռուսաստանի եւ Մոլդովայի միջեւ տնտեսական համաձայնագրի ստորագրումը: Բանակցությունների ծրագրով ստորագրման հանդիսավոր արարողությունը նախատեսվում էր երկուշաբթի, ժ. 14-ի կողմերը:

Սակայն, համաձայնագրի տեքստի ձեւակերպման ժամանակ երեւան եկան տարաձայնություններ: Պարզվեց, որ Ռուսաստանը պայմանագրի սեփական տարբերակում առաջարկում է հաշվումները կատարել անկանխիկ սկզբունքով: Իսկ Մոլդովան առաջարկում է հաշվումները կատարել հին ձեւով, նախկան ամբողջությամբ շուկայական հարաբերություններին անցնելը:

Ինչպես հայտնի դարձավ, երկուշաբթի երեկոյան ՌԽՖՍՀ-ի եւ Մոլդովայի միջեւ ստորագրվեց առեւտրատնտեսական համագործակցության պայմանագիրը 1992 թ. համար:

Երկու հանրապետությունների ձեռնարկությունների եւ կազմակերպությունների միջեւ արտադրության կարեւորագույն տեսակների փոխմատակարարումները իրականացվելու են անկանխիկ հաշվումների սկզբունքով՝ համաշխարհային գներով:

Միեւնույն ժամանակ ՌԽՖՍՀ Նախարարների խորհրդի նախագահ Իվան Սիլաեւը նշեց, որ Ռուսաստան-Մոլդովա համագործակցության ծրագիրը, ի տարբերություն այլ հանրապետությունների հետ համագործակցության ծրագրերի, *«իրականացվում է բավականին հաջող, չնայած լուրջ դժվարություններին, եւ բարձր կատարողական մակարդակով»:* ■

Ադրբեջանի սոցիալ-դեմոկրատների հույսը

Ադրբեջանի նախագահության թեկնածու Զարդուշտ Ալիզադեն «ԻԹ»-ի թղթակցի հետ հարցազրույցում հայտարարեց, թե իր կուսակցությունը հույս ունի առավելագույնս օգտագործել նախընտրական արշավը՝ ժողովրդի մեջ ազդեցությունը մեծացնելու համար: Ալիզադեն խոստովանեց, որ իր հնարավորությունները փոքր են: Սակայն սոցիալ-դեմոկրատները պետք է օգտագործեն ցանկացած հնարավորություն՝ տարածելու իրենց գաղափարները:

Ադրբեջանի անկախացման սոցիալ-դեմոկրատների ծրագիրը նախատեսում է սեփականաշնորհում, խոսքի ազատություն, հանրապետության դուրս գալը ԽՍՀՄ կազմից:

Ադրբեջանի ժողովակատը կոչ է արել չմասնակցել ընտրություններին: ԱՍԴԽ ղեկավարությունը իր շարքերից հեռացրեց Լեյլի Յուսունովային, որ ձայնակցել էր կոչին: *Այդ քայլն արվել է ԱՍԴԽ-ի պառակտումը կանխելու նպատակով,-* ասաց Զ. Ալիզադեն: Յուսունովայի տեսակետը քննվելու է ԱՍԴԽ համագումարում, որ կայանալու է օգոստոսի 31-ից սեպտեմբերի 1-ը: ■

Ադրբեջանում պայթել է խորհրդային բանակի զինապահեստը

Օգոստոսի 10-ին, ցերեկվա ժ. 13.00-ին Ադրբեջանի Ուլյանովկա գյուղի մոտ (Վրաստանի հետ սահմանագծում) տեղակայված զինապահեստում հրդեհ բռնկվեց, եւ պայթյուններ տեղի ունեցան մի քանի ժամ անընդհատ: Ոչոչ տվյալներով, պայթել է Անդրկովկասի ռազմական օկրուգի կենտրոնական պահեստը:

Նախնական տեղեկություններով, 10 զինծառայող վիրավորվել են, 2-ը տեղափոխվել են հիվանդանոց: Զինվորական ավանի 40 տներ այրվել եւ փլվել են, Աղսուաֆայի շրջանի Սաղախլու գյուղի 220 տներ վնասվել են: Վնասը կարող է կազմել միլիարդավոր ռուբլիներ:

Զինվորականները առայժմ մեկնաբանություններ չեն տալիս, հայտնում է «ԻԹ»-ի թղթակիցը: Պաշտպանության նախարարությունում հայտնեցին, որ այս լուրը ոչ հերքել, ոչ էլ հաստատել չեն կարող: ■

Զոհվել են 353 ադրբեջանցի զինծառայողներ

Այս տարվա հունվարի 1-ից ԽՍՀՄ տարածքում զոհվել են 353 ադրբեջանցի զինծառայողներ, որոնք զորակոչվել էին Ադրբեջանում: 220 հոգի տարբեր ասիճանի վնասվածքներ ունեն:

Այս տվյալները «ԻԹ»-ի թղթակցին հայտնեց Ադրբեջանի ժողովրդական ճակատի զինծառայողների եւ զորակոչիկների գործերի հանձնաժողովի նախագահ Ֆ. Հաջիեւը: ■

Լիտվայի կառավարության հանձնաժողովի դիմումը

Լիտվայի հանրապետության կառավարության հանձնաժողովը, հետաքննելով Սեդինինկայի ողբերգական իրադարձությունները, հանդես եկավ դիմումով, որում նշում է, թե Խորհրդային Միության ղեկավարությունը շահագրգռված չէ Վիլնյուսի հունվարյան եւ Սեդինինկայի հուլիսի 31-ի արյունալի դեպքերի օբյեկտիվ հետաքննությամբ: Հանձնաժողովի դիմումում բերված են հետեւյալ փաստարկները. ԽՍՀՄ ՆԳՆ-ն, ՊԱԿ-ը եւ պաշտպանության նախարարությունը, ինչպես նաեւ ԽՍՀՄ դատախազությունը թաքցրնում են Վիլնյուսի այս տարվա հունվարյան դեպքերի մեղավորների անունները, երբ զոհվել են խաղաղ մարդիկ: ԽՍՀՄ դատախազությունը եւ ՆԳՆ ներկայացուցիչները Սեդինինկայի սպանությունները հետաքննող Լիտվական հանրապետության իրավապահ մարմիններին ոեալ օգնություն չեն ցուցաբերում, ձգձգում են հետաքննությունը: ԽՍՀՄ ՆԳՆ-ն չի կազմալուծում, այլ պաշտպանում է իրեն ենթակա Ռիգայի եւ Վիլնյուսի ՕՄՈՆ-ի ջոկատները, որոնք բալթիական պետություններում բացահայտ տեռոր են անցկացնում:

ՊԱԿ-ը դատապարտում է «Վաշինգտոն թայմզ»-ին

ԽՍՀՄ ՊԱԿ-ը ուշադրություն է դարձրել ԱՄՆ-ի մի շարք հրատարակությունների հաղորդած բացահայտ մոլորեցուցիչ հաղորդագրությունների վերաբերյալ: ՊԱԿ-ի հասարակական կապերի կենտրոնի (ՀԿԿ) պրես-սելիզում ընդգծվում է, որ չնայած խորհրդա-ամերիկյան հարաբերություններում դրական տեղաշարժերին, այդ հաղորդումները նոպատակ ունեն վարկաբեկել ԽՍՀՄ ներին եւ արտաքին քաղաքականությունը:

Օրինակ է բերվել **«Վաշինգտոն թայմզ»** թերթը, որը դարձել է ԱՄՆ-ում **«մոլորեցուցիչ հաղորդագրությունների գլխավոր մատակարարը»:** Մասնավորապես, այդպիսի բնույթ ունի թերթի այն հրապարակումը, որ խոսվում է Գերմանիայից՝ Արեւմտյան խմբի զորքերի զորակայաններից քիմիական զենքի էվակուացման մասին, որ հայտնաբերել է ամերիկյան հետախուզությունը: ՀԿԿ տվյալներով, 1990-91 թթ. գրանցվել են նմանատիպ 60 հրապարակումներ:

Ամերիկյան դեսպանը ռուսերեն է սովորում

Մոսկվայում Ս. Նահանգների դեսպան Ռոբերտ Շտրաուսը, որ ներկայումս Կալիֆոռնիայի իր ծովահայաց առանձնատանը արձակուրդային օրերն է անցկացնում ծիավարժությամբ եւ բարեկամների հետ պոկեր խաղալով, ժամանակ է գտնում 4 ժամ հատկացնելու ռուսերենի պարապմունքներին: Նրա ռուսերենի դասատուն, որ վճարվում է պետքարտուղարության կողմից, վերջերս ամերիկյան մամուլին հայտնեց իր աշակերտի ցանկություններից մեկի մասին. **«Շտրաուսը աշխատում է տեխասյան հարազատ դարձվածքներ օգտագործել ռուսերենում: Օրինակ, նա ցանկանում է սովորել, թե ինչպես կարելի է ռուսերեն ասել. «այդ շունը չի կարող որսալ» արտահայտությունը: Միայն թե դեռ հայտնի չէ, թե ամերիկյան դեսպանը խորհրդային որ պաշտոնյայի համար է օգտագործելու այդ արտահայտությունը»:**

«Հերոսի» բացահայտումը

Անցյալ ամիս Սան Պաուլոյի Կումբիկա օդանավակայանի ստուգիչ սարքի օպերատորներից Խոսե Լուիզ Պրադո Սայբլերը հերոս էր հռչակվել, երբ պայթուցիկ սարք էր հայտնաբերել Սան Պաուլոյից Տոկիո մեկնող JUL օդանավ բարձրացող ճամպրուկներից մեկի մեջ:

Ոստիկանությունը սկզբում կասկածել էր ճապոնական **«Կարմիր բանակ»** ահաբեկչական խմբին: Սակայն հետագա խուզարկումները կասկածը տարել էին Սայբլերի բնակարանը, որտեղ ոստիկանությունը գտել էր մագնիսական ժապավենի մի կտոր, որ նմանակն էր ռումբի վրա գտնվածի: Ոստիկանությունը գտել էր նաեւ, որ պայթուցիկ սարքը պատրաստված է ճիշտ այն սխեմայով, որով նախապես Սայբլերը դասավանդում էր իր աշակերտներին: Անցյալ շաբաթ բրազիլական ոստիկանությունը հայտարարեց, թե դատական գործ է հարուցվել Սայբլերի դեմ, որը շուտով կկանգնի դատարանի առաջ: Հոչակյալ հերոսին սպասվում է 7-8 տարվա կալանք՝ փոխանակ աշխատավարձի 20 տոկոս հավելումին, որի ակնկալությամբ նա ծեռնարկել էր իր «հերոսական» արարքը:

Նոր մանրամասնություններ Գրիգորյանի սպանության շուրջ

Ստեփանակերտում շարունակվում է շաբաթ օրը սպանված մարզկոմի բաժնի վարիչ Գրիգորյանի սպանության հետաքննությունը: Օգոստոսի 10-ին, ինչպես ճշտվեց, չեխական արտադրության *«Սկորպիոն»* մակնիշի ատրճանակից 13 անգամ կրակել են նրա վրա:

Քննչական մարմինները առայժմ ձեռնպահ են մնում որեւէ տեղեկություն տալուց: Սակայն Ստեփանակերտում կարծիք կա, որ մի հանգամանք կարող է լույս սփռել ոճրագործության վրա, այն է՝ Գրիգորյանը Ադրբեջանի հետ բանակցություններ վարելու ամենաակտիվ կողմնակիցն էր եւ օգոստոսի 8-ին կազմված հավաքում կոչ էր արել մասնակցել Ադրբեջանի նախագահի ընտրություններին: ■

Իրանը դատապարտում է ահաբեկչությունը

Շահփուր Բախթիարի սպանությունը եւ Միտերանի այցն Իրան

Նոր վարկած սպանության մասին

Մինչեւ Շահփուր Բախթիարի սպանության հետաքննության արդյունքների հրապարակումը, Ֆրանսուա Միտերանը Իրան այցելելու մտադրությունից հրաժարվելու մասին որեւէ որոշում չի կայացնի:

Միտերանի պաշտոնական հայտարարությանը նախորդել էին այն հաղորդագրությունները, ըստ որոնց Ֆրանսիայի նախագահը Շահփուր Բախթիարի սպանությունից հետո մտադիր է չեղյալ համարել իր պաշտոնական այցն Իրան: Հերքելով այդ լուրերը, Ֆրանսուա Միտերանը հայտարարեց, թե Իրան այցելելու մասին որոշում կայացնելու համար բավականին ժամանակ կա, պետք է սպասել հետաքննության արդյունքներին եւ քաղաքական ահաբեկչության մեղավորների հայտնաբերմանը:

Նախագահ Միտերանը դեռեւս իր վերաբերմունքը չի արտահայտել այդ սպանության վերաբերյալ եւ միայն բավարարվել է Բախթիարի հարազատներին ցավակցություն հայտնելով:

Իրանի *«Ազգային դիմադրություն»* կազմակերպության որոշ անդամներ Ֆրանսիայի ոստիկանությանը հայտնել են Բախթիարի սպանության մասին իրենց վարկածը, ըստ որի Բախթիարին եւ նրա օգնական Սորուշ Քյաթիբիին սպանել է Ֆերեյդուն Սիմադին, որը լինելով «Ազգային դիմադրության» անդամ եւ ունենալով դիմադրության շարժման ղեկավար Բախթիարի բնակարանը մուտք գործելու իրավունքը, երկու ուրիշ իրանցիների հետ հայտնվել է վերջինիս բնակարանում եւ սպանել Իրանի նախկին վարչապետին: Ֆերեյդուն Սիմադին ուղեկցող Վահիլի Ռադը եւ Մոհամմադ Ազադին նույնպես վերջերս էին անդամագրվել «Ազգային դիմադրություն» կազմակերպությանը: Ֆերեյդուն Սիմադի հարեւանը վկայել է, որ Բախթիարի սպանությունից հետո Սիմադին այլեւս տուն չի վերադարձել: Երեքշաբթի օրը Ֆրանսիայի ներքին գործերի նախարարությունից հայտնեցին, որ Բախթիարի սպանության մեջ մեղադրվող երեք իրանցիները ահաբեկչությունից հետո փախել են Շվեյցարիա կամ Իտալիա: Վահիլի Ռադը եւ Մոհամմադ Ազադին, ըստ Ֆրանսիայի ներքին գործերի նախարարության, Թուրքիայի անցագրերով էին մուտք գործել Ֆրանսիա:

Իրանում անգլերենով հրատարակվող *«Ջեյհան»* թերթի կարծիքով, Բախթիարի ընտանիքի անդամներ Իրանի հակառակորդներ փորձում են սեղ խրել Թեհրանի եւ Փարիզի հարաբերությունների մեջ: *«Ջոմհուրի-է Էսլամի»* թերթը կիրակնօրյա համարում դատապարտելով քաղաքական ահաբեկչությունը, նշել է, որ Իրանի հակառակորդները ցանկանում են արեւմտյան երկրների հետ Իրանի հարաբերությունները մթագնել: Նկատի ունենալով Անգլիայի հետ Իրանի հարաբերությունների բարելավումը եւ անգլիացի պատանդներից մեկի՝ Ջոն Մակ Քարթիի ազատագրման համար Թեհրանի գործուն մասնակցությունը, թերթն իր մտահոգությունն է հայտնում, թե հաջորդ դավադրությունը կարող է տեղի ունենալ Անգլիայում: Օգոստոսի 12-ին Իրանի արտգործնախարարության խոսնակը հերքեց Իրանի իսլամական հանրապետության եւ Շահփուր Բախթիարի սպանության մեջ որեւէ կապի առկայությունը:

Գորբաչովի ուղերձը Ռաֆսանջանիին

Երկուշաբթի օրը Իրանում հավատարմագրված Խ. Միության դեսպանը Իրանի արտգործնախարարի տեղակալ Վաեզիի հետ հանդիպման ժամանակ հանձնեց Գորբաչովի դիմումը նախագահ Ռաֆսանջանիին: Ուղերձում, համաձայն Իրանի պաշտոնական հաղորդագրությունների, Խ. Միության նախագահը, խոսելով վերջերս Մոսկվայում կայացած խորհրդա-ամերիկյան գագաթաժողովի արդյունքների մասին, անդրադարձել է բոլոր բնագավառներն ընդգրկող խորհրդա-իրանական հարաբերությունների ընդլայնման անհրաժեշտությանը: Գ. Ս.

Azg semi-weekly, 47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010
phone: 58-1841, fax: (8-852)56-2941, telex: 243267 SULA SU
Խմբագիր Յ. ԱՎԵՏԻՔԵԱՆ
Editor H. AVEDIKIAN
Դասիչ 69149
Macintosh համակարգչային շարուածքը Ռ.Ա.Կ. ծաղոյ եւ տեղեկատուության կենտրոնի

digitised by A.R.A.R.@